

"Droschak"

ORGANE

de la F. R. A.

"Daschnaktzoutioum"

# ԴՐՕՇԱԿ

Adresse :

Rédaction du Journal

Droschak

GENÈVE (Suisse)

## « ՀԱՅ ՏԵՂԵՍՓՈՒՆԿԱՆ ԴԱՆՆԵԿՑՈՒԹԵԱՆ » ՕՐԳԱՆ

### ԱՓ ՄԸ ՀՈՂԻ ՀԱՄԱՐ

Ի՞նչքան մանուածապատ և ընդվզեցուցիչ հանգամանք ստացաւ տարագիր հայրենակիցներու ներգաղթի խնդիրը:

Ամբողջ ողբերգութիւն մը:

Դժուար թէ ժողովուրդ մը այսքան օրօրւած և տառապած ըլլայ իր իշխանաւորներուն ձեռքով, ափ մը հողի համար: Եւ այս՝ չորս տարիէ ի վեր: Շնորհալիք յաւակնութիւններ և հաւաստիքներ, յետոյ հաւատաքննական հարցարաններ և անվերջ գործողութիւններ, — և տակաւին տասը հազարի չի հասնիր վերադարձողներուն թիւը:

Քոյր երկիրները պատուարներ քաշած են օտարներուն առջև, որպէսզի տեղ բանան իրենց հայրենակիցներուն համար, և ապահովեն անոնց հանգիստը: Հիւանդկախ թուրքերն անգամ, որ միշտ հրաբուխի վրայ է, միշտցին կը մտածէ որպէսզի բոլոր թուրքերը համախմբէ իր սահմաններուն մէջ: Միայն մեր երջանիկ երկիրն է որ սակարկութիւններ կը կատարէ իր զաւակներուն հետ, կը հարցաքննէ ու կը մաղէ գանոնք. նոյնիսկ խտրութիւններ հաստատելով ունեւորին և չունեւորին միջև:

Ի՞նչ խօսք որ, այսպէս կոչուած հայկական կառավարութիւնը իր խորթ ընթացքով յաճախ կը գերազանցէ օտար, քաղցնի պետութիւնները: Այնքիկեան «քոթած» աւելի անտանելի չէ քան Երևանի մաղը:

Կ'ուզենք պաղարիւնութեամբ դատել: Կը փորձենք հիմնաւորել գոց եղած պատրուակները: Ի՞՞՞ր և իրականութիւնը ինք ամենէն անողոք դատախազն է պոլշեիկ վարիչներուն դէմ:

1922ին, ձենովայի մէջ, երբ առաջին անգամ աշխարհակալներուն հետ մէկ սեղան կը նստէր խորհրդային իշխանութիւնը, զուսազեղ շքախումբով մը, Փարիզէն հայկական պատուիրակութիւններ փութացին Ձիչերինի մօտ, և անոր աւագորու թեան յանձնեցին հայ ժողովուրդին կացութիւնը,

անոր բազմանըներն ու տրտուշիբը: Առանձնապէս շեշտուեցաւ ներգաղթի խնդիրը: Ռուսական պատուիրակութեան անդամ էր նաև հայ պոլշեիկ մը, որ գաղթականներու խնդիրը կը համարէր պարզ անտեսական հարց, և կը խոստանար իբր այդ պաշտպանել անտեսական յանձնախումբին մէջ: Հայ պատուիրակը հարկ դատած էր շեշտել նաև թէ՛ Խորհրդային իշխանութիւնը, հետեւաբար և Հայաստան պիտի կուտին թուրքերոյ կողքին, եթէ դրամատէր պետութիւնները յարձակին իրենց գիտակցին վրայ, հող գրաւելու և «Հայկական Օջախ» հիմնելու համար:

Ոչ մէկ իրական արդիւնք ունեցան այս ձեռնարկներն ու հաւաստիքները:

Ձախողեցան նաև այն բանակցութիւնները, որ կը կատարուէին Պոլսոյ մէջ, խորհրդային ներկայացուցչին և ազգ. իշխանութեանց միջև. Նահրէլ-Օմարի գաղթականներուն փոխարուծեան համար: Երևան միայն հող կը խոստանար, փոխարէն պահանջելով գաղթականներուն ճամբու ծախքը, հազուստ կապուստ, ապուստի ապահովութիւն են:

1923ին, Լօզանի մէջ, երբ Դանիակիցներու խորհրդարանութիւնը և «Եղբայրական» Ռուսաստանի զինւորական ու դիւանագիտական եղբայրակցութիւնը ջուրին երեսը կը հանէին թուրքերան, յաղթականի սուր մըն ալ կապելով անոր մէջքին, Ձիչերին թատերական տեսարան մը պարզեց: Յանձն առաւ «մէկ հարուածով» լուծել Հայկ. Խնդիրը, Քուպանի մէջ տեղ տրամադրելով 250,000 հայ գաղթականներու: Այսքանը բաւական եղաւ թունդ հանելու միախտններուն սրտը, մինչև որ բանակցութիւններ և առաջելութիւններ մերկացուցին գործին էութիւնը: Ձիչերին այդ «շնորհը» կ'ընէր, պայմանաւ որ արտասահմանը ստանձնէր բոլոր ծախքերը: Մասնաւոր պատուիրակ մը, ամերիկացի Պ. Մօնկոմերի գնաց Մոսկուա, քննութիւններ կատարեց, և վերադարձաւ Ամերիկա: Այս առթիւ պատրաստուած տեղեկագիրն ալ կը հաստատէր թէ՛ Խորհրդային Միութեան արտաքին գործավարը պարզապէս ռազմախաղ մը փորձեր է, թէ որ և է ռազմ. ծրագիր չկայ Քուպանի մասին: Ձիչերին Խառն ջարկէր ոչ միայն Քուպանը, այլ և Վօլկան.

Քրդիզներու երկիրը, մինչև Թուրքիստան : Ռուսաստանը սահման չունի. գացէք ուր որ կրնաք...

Լուծել կայական Դատը՝ անծայր տափաստաններու մէջ լուծելով հայ ժողովուրդին մնացորդները:

Այս շնաշխարհիկ ծրագիրն է որ կը փառաբանուի մինչև այսօր, Երեւանի վարչներուն և անոնց հաւատարիմներուն կողմէ: Ու վերջինները չեն մոռնար անոր ձախողման պատասխանատուութիւնը բեռնել գաղութներուն վրայ, որ դրամ չճարեցին, և առանձնապէս Հ. Յ. Դաշնակցութեան վրայ, որ պարտք համարեց պարզել թէ նոր խաղ մը կը փորձուի հայ ժողովուրդի ապագային դէմ:

Շուտով — և բարեբախտաբար — մոռացութեան տրուեցան այս խոշոր խայծերը, և ամբողջ ներգաղթի խնդիրը վերածուեցաւ գեեհիկ սակարկութեան մը. Անդրկովկասի Պոլսոյ ներկայացուցիչներուն եւ ազգային իրաւասու օրկաններու միջեւ: Երեւան միշտ պայման կը դնէ ճամբու ծախքը եւ երեք — այժմ վեց — ամսուան ապրուստը: Տրուած հաւաստիքներուն վրայ, 1924ի միջոցին ձեռնարկներ կատարուեցան մասնաւորապէս Ամերիկայի մէջ, դրամ ճարելու համար, որպէսզի Հայաստան փոխադրուին զոնէ Պոլսոյ կայաններու 5-6000 գաղթականները եւ Յունաստանի տեղահան հայրենակիցները: Ամբողջ տարուան ընթացքին, կրցան երթալ միայն քանի մը հարիւր հոգի Պոլսէն, հազար հոգի՝ Յունաստանէն, մաս մըն ալ Միջագետքէն:

Տարուան վերջերը նոր աւետիս, — տասը հազար գաղթականներ պիտի ընդունուին 1925ի գարնան, Յունաստանէն: Մինչև այսօր կը սպասեն այդ անբախտները, Պելոպոնէսի ժայռերուն մէջ կամ ծովափը: Եւ նոր խումբեր: Նոյն իսկ որբերը կը տեղահանուին, իբրև ճամբորդ: Այս բոլորին ճակատագիրը կապուած է Նահսէնի առաքելութեան հետ:

\* \*

Կը հետեւի թէ, Երեւան երբեք հասկցած չէ կացութեան լրջութիւնը, ներգաղթի խնդիրն ալ դարձնելով քաղաքական պայքարի նիւթ: Այն բոլոր ճատերն ու փոխասացութիւնները որ կը կատարուին այս հարցին շուրջը, տարեկան համագումարներու մէջ, սովորական ճամբարտակութիւններն են, զրգոյիչ եւ սնամէջ:

Ինչո՞վ բացատրել խօսքի եւ գործի այս հակասութիւնը:

Կատարկեն թէ տեղ չկայ: — Բայց ներելի չէ որ «համաշխարհային յեղափոխութեան» նուիր-

ուած իշխանութիւն մը անճրկի, ափ մը հող տրամադրելու համար իր հարազատներուն: Եւ դժուար է հաւատալ թէ տեղ չկայ, երբ այնքան տարածութիւններ աշխատաւոր ձեռքերու կը կարօտին, Երաւբալաքէն մինչև Նախիջևան: Այս վերջին գաւառը, որ 540,000 քառ. տեսիատին տարածութիւն ունի, 200,000 բնակիչ կը համրէր Մեծ Պատերազմէն առաջ: Այսօրուան բնակչութիւնը 100,000էն ալ պակաս է, համաձայն խորհրդային աղբիւրներու: Նոյն գաւառին մշակելի հողերու տարածութիւնն է աւելի քան 80,000 տեսիատին, մինչդեռ կը մշակուի հազիւ 40,000. ուրեմն, բաց կը մնայ 40-50,000 տեսիատին, ուրիշ խօսքով՝ տեղ ունինք նոյնքան ժողովուրդի համար: Բասար, գեչարի մէջ կար 64 զիւղ, վերջին դէպքերէն առաջ: Վերադարձեր են միայն 29 զիւղերու քակիչները — միշտ համաձայն խորհրդային աղբիւրներու: Տրամադրելի կը մնայ 35 զիւղ ըլլան աւերակներ: Այն հարիւրակները որ Հայաստան մտան այսպէս կամ այնպէս, իրենց միջոցներով կը շէնցեն երկիրը, զիւղեր և աւաններ շինելով: Պէտք չկայ սպասելու որ անապատները ջրարբի դառնան: Ամերիկայի Հայրենակցական Միութիւնները գործի ձեռնարկած են արդէն, և անշուշտ աւելի արագ եւ արդիւնաւոր աշխատանք պիտի կատարեն, եթէ վերջ գտնեն ոստիկանական կաշկանդուներն ու տաղտկալի ձեւակերպութիւնները, որոնք յաճախ ամիսներ կը տեսնեն:

Պոլլեւիկ վարչները իրենք միշտ կը շեշտեն թէ երկիրը պէտք ունի մասնագէտներու, արհեստաւորներու եւ զիւղատնտեսներու: Արդ, գացողները իրենց հետ կը տանին ինչ որ ունին, ինչ որ գիտեն: Ուրեմն, նրաթական հոգն ալ կը թեթեւայ մեծապէս: Վերադարձող բազմութիւնները ծխախոտ պիտի մշակեն, շերամարածութիւնը պիտի գարգացնեն, կտաւ պիտի գործեն, երկաթ պիտի ծեծեն, արտ պիտի վարեն կամ այդք պիտի մշակեն: Անոնք բեռ չեն իշխանութեան վրայ:

Ըսողներ կան թէ ամէն բան Երեւանէն կախում չունի Այս ատեն, ինչո՞վ կ'արդարանայ իրենց գոյութիւնը: Մեր յուզած խնդիրը կապ ունի ամբողջ ժողովուրդի մը ճակատագրին հետ: Այս միջոցին, մենք չունինք աւելի ստիպողական, եթէ կ'ուզէք աւելի պրոպագանդա խնդիր, քան համախմբու՞մը հայաթական եւ ցիրուցան բազմութիւններուն, որոնք 90% աշխատաւորներ են, զիւղացիներ ք որբեր, արհեստաւորներ եւ բանուորներ: Ամբողջ երիտասարդութիւն մը կը ծիւրէ հոգեպէս եւ ֆիզիքապէս, օտար ափերու վրայ:

ինչ որ կը սպառի արտասանմանի մէջ, կորուսածն է ամբողջ աշխատաւորութեան համար, երկրին համար: Երևանի պարտքն է հասկնալ այս ճըշմարտութիւնը եւ հասկննդ զայն ո՛ր որ պէտք է, եւ անոր համեմատ լարել իր ուժերը, միեւնոյն ստան պարտականութեան հրահրելով զաղուճիկները:

Բացէ՛ք դուռները, եւ լայն բացէք, որպէսզի բոլորն ալ համոզուին թէ իսկապէս այս ժողովուրդին բարիքին համար կ'աշխատիք:

Ո՛ր է տեսնուած, որ իշխանութիւն մը մենաշնորհ դարձնէ երթևեկի իրաւունքը, եւ աղերսելու, ստրկանալու հարկադրէ հայրենիքին զաւակները:

Ո՞վ տուաւ ձեզ իրաւունք սակարկելու արմատախիլ ժողովուրդին հետ, սպի մը հողի համար:

Ներզաղթը տնտեսական խնդիր չէ միայն, այլեւ ֆիզիքական: Բացէք դուռները, եւ յետոյ մտածեցէ՛ք նաև սահմանները ընդարձակելու մասին:

Այս ալ յեղափոխական գործ է:

## Մ Ե Ղ Ա Դ Ր Ա Ն Ք Ե Ր

### ԵՒ

## Ի Ր Ո Ղ ՈՒ Թ Ի Ն Ե Ր

Բոլշեւիկները դիտմամբ աշխատում են ընդհանրացնել այն կարծիքը, թէ Գաշխակցութիւնը հոկտեմբերեան յեղաշրջման ճեղք սկիւրջը թշնամի է եղել Խորհրդային իշխանութեան և բնաւ չի աշխատել որոշ հասկացողութեան գալու երա հետ: Երտաքին գործոց գործավար Ձիչէրինը այս տարւայ Մարտի 12ին Ալեքսանդրապոլում արտաստեմ մի ծառի մէջ պիտու էր, թէ՛ «այն ժամանակ, երբ Գեղեճեզուր կառավարութիւնը Թիֆլիսում աշխատում էր Խորհրդային իշխանութեան հետ, թէկուզ առ երևոյթ, որոշ կապ հաստատել, այն ժամանակ, երբ Խան-Խօյսիլու կառավարութիւնն աշխատում էր Խորհրդ. կառավարութեան հետ որ եւ է բանակցութիւններ սկսել, այդ ժամանակ միայն դաշնակցական կառավարութիւնն էր, որ բացարձակ թշնամական դիրք էր բռնել: Վերջին ամենատեսու կապ էր պահում ուս սպիտակ զարդիական գեներալների հետ. նա ամէն բանում հետեւում էր Անտառայի կառավարութեան ցուցումներին: Անդրկովկասեան կառավարութիւնները դաշնակցական կառավարութիւնն ամենից ծայրայեղ դիրք էր բռնել՝ անհաշտ կռու մղելով աշխատաւորութեան դէմ»):»

Որքան ճիշտ են այս մեղադրանքները և, առհասարակ, ի՞նչ է եղել և ի՞նչ պիտի լինի Գաշխակցութեան դիրքը հանդէպ Խորհրդային իշխանութեան:

Գրօշակի սուղ էջերը, հարկաւ, թոյլ չեն տայ առաջ բերելու ամբողջ պատմութիւնը դաշնակցական-բոլշեւիկ փոխարարելութեանց, բայց դէպքերի համառոտ թուումն իսկ

բաւական կը լինի ցոյց տալու համար, որ Ձիչէրինների վերադրուածները բաժնասնջից ու զբախտութիւնից այն կողմը չեն անցնում և որ Գաշխակցութեան ընթացքը Խորհրդային իշխանութեան նկատմամբ ամբողջապէս պայմանաւորել է այս վերջինի վերաբերումով և վարած քաղաքականութեամբ: Մենք այստեղ չպիտի բռնակը այն տարբերութիւնների մասին, որոնք կան երկու կուսակցութիւնների տեսական աշխարհայեացքի, պատմափիլիսոփայութեան միջև: Միզ հետաքրքրում են քաղաքական խնդիրները:

Երբ տեղի ունեցաւ հոկտեմբերեան յեղաշրջումը, Գաշխակցութեան, ինչպէս և բոլոր Հայերին, զբաղեցնող զլիաւոր հարցը այն էր, թէ ի՞նչ է լինելու բոլշեւիկների քաղաքականութիւնը պատերազմի ու հաշտութեան և, մասնաւորապէս, Տաճկահայաստանի գրաւած նահանգների և կովկասեան ծակտի ապագայի հարցի մէջ: Ժամանակաւոր կառավարութիւնը արդէն վերցրել էր որոշ յանձնառութիւններ թրջահայ հողերի խնդրում և ձեռնարկել հայկական նահանգների կազմակերպման գործին. նշանակւած էր ընդհանուր նահանգապետ, ստեղծուած էր հայկական վարչութիւն, զաղթականութիւնը վերադառնում էր տեղերը և, առհասարակ, վերածնունդին մի շրջան էր սկսւած արեւմտահայութեան համար: Բայց այդ, Կերէնակիի կառավարութիւնը ընդունելով հայկական հարցի միջազգային բնոյթը՝ յանձնառու էր եղել Թրքահայաստանի ինքնավարութեան պահանջը մտցնել ուսական հաշտութեան պայմանների մէջ:

Ի՛նչ էր բոլշեւիկների դիրքը այս հարցերի հանդէպ: Ժամանակաւոր կառավարութեան դէմ՝ մղած պայքարում Լէնինը յաճախ օգտագործում էր և հայկական հարցը՝ զինով չափազանց արմատական պահանջներ. Կերէնակիի քաղաքականութիւնը նա անանում էր «իմ պերիպլոզմն», «բռնի նաւազգայնութիւն» և պահանջում էր, որ Հայաստանը անմիջապէս դարձի անկախ և ուսական գորքերը հետեան գրաւած նահանգներին: Կերէնակիի առարկութիւնը, թէ՛ այդ դէպքում Հայերը կը կտորուեն Թուրքերի ու Քիւրտերի կողմից, համոզեցումը չէր թոււմ Լէնինին, և նա իր ծառերի և յօդուածների մէջ անվերջ կրկնում է ուսաբանակը Հայաստանից հեռացնելու պահանջը:»

Իշխանութեան արեւելոց երկու ամիս յետոյ, Գեղու. 30ին, Լէնինը հրատարակեց իր Նախըսմանօթի դիւրեւոր, որով «այստարտում է հայ ժողովրդին, որ Ռուսաստանի բանակական և զիւլոցիական կառավարութիւնը պաշտպանում է Ռուսաստանի կողմից նաւաւած Տաճկահայաստանի Հայերի իրաւունքը ազատութեն ինքեորդեւոր» միեւն կատարել անկախութիւն» և որ «այդ իրաւունքի գործադրութիւնը հարաւոր է միայն հայ ժողովրդի ազաւ անֆէրեւորելի (հանրաքեղէ) համար բացարձակութեն անհրաժեշտ մի շարք նախնական երաշխեւների պայմանով»: Այդ պայմաններից առաջինն է՝ «հեռացնել Տաճկահայաստանի սահմաններից գորքը և անմիջապէս կազմել հայկական ժողովրդական միդիցիւրա Տաճկահայաստանի բնակիչների անձի և գոյքի սպահովութեան համար»:

Մինչ հրատարակում էր այս դիւրեւորը, ուսա գորքերը

\*) Տես և «Խորհրդ. Հայաստան», 1925 թ. Մարտի 15, No 60:

\*) Տես Լէնինի «Երկերի ժողովածու»-ի 14-րդ հատորը և Կերենակիի նաւը «Պետրոպոլիսի խորհուրդների կուլիսեւում»:

բայելիկները հրամանով արդէն սկսել էին պարզել գրաւած նահանգները՝ թողնելով հայ ժողովրդին մնակ և անպաշտպան սանձի բանակի և քրդական հրոսախմբների առջեւ։ Եւ դեռ դերձար միւսը չէր շրջացել, երբ 1918 թ. Մարտի 3ին Բրէշթ-Լիտովսկում Խորհրդային իշխանութիւնը Տաճիկներին էր յանձնում ո՛ր միայն թրջահայ նւաճած հողերը, այլ և Ռուսաստանի մի երրորդը՝ Կարսը, Արղահանն ու Կաղզաւանը։

Պարզ էր, որ կոմունիզմի և Համաշխարհային յեղափոխութեան անունից ճառող բոլշեւիկների համար էլ Հայկական Հարքը քաղաքական զէնք էր ստել, ինչպէս մինչև այդ եղել էր անդլիական ու Փրանսիական դիւանագիտութեան համար։ Մի փաստ, որ աւելի ևս ամբապնեցրին յետագայ զէպքերը։ Բոլշեւիկները ըստ շուտով ձեռք մեկնեցին իթթիհատական պարագլուխներին։ Կարլ Ռադէկը 1918 թ. գարնան Բերլինում բանակցութիւնների մէջ մտաւ Հայկական ջարդերի ղեկավար Թալէաթ փաշայի և Իթթիհատի կեդրոնի միւս անդամների հետ։ Մտա չանցած՝ Էնվէր փաշան յայտնեց Մօսկայում, մեծարեց ու փայփայեց բոլշեւիկ պարագլուխների կողմից և զարտիի Համաձայնութիւն կնքեց նրանց հետ։ Բոլշեւիկ-իթթիհատական գործակցութիւնը դաւանում է փառտ. Էնվէր փաշա, Ջէմալ փաշա, Թալի փաշա, Քեաղիմ բէշ և քաղմաթիւ ուրիշ իթթիհատական փաշաներ ու բէշեր բոլշեւիկների հետ մտնում ևս աննախարհ Համագործակցութեան մէջ։ 1919 թ. Դեկտ. 27ին, Մասնուհում, բոլշեւիկներին և տոճիկ ազգայնականների միջև կնքւում է զարտիի դաշնագիր, որով «առաւ սովետական հանրապետութեան կառավարութիւնը ընդունում և վաւերացնում է օսմանեան կառավարութեան անկախութիւնն ու կատարեալ գերիշխանութիւնը իր զինազտարի կնքման պաշտն ունեցած սահմաններով», խոստանում է «իւր բոլոր նրթական ու բարոյական ուժերով օգնել պաշտպանելու օսմանեան գերիշխանութիւնը և յոգային ամբողջութիւնը»։ Այսպիսով, Խորհրդային իշխանութիւնը իր հովանաւորութեան տակ է առնում թրջահայ ժողովրդի ջարդարներիին, հակառակ Դեկտ. 30ի զէկրէտի՝ Տաճիկների սեփականութիւն և Համարում հայկական նահանգները և պարտաւորում զէնքի ուժով պաշտպանել այդ նահանգների անձեռնմխելիութիւնը։

Այնուհետեւ տեղի են ունենում մի շարք զէպքեր, որոնք ակնյայտի են դարձնում այն իրողութիւնը, որ բոլշեւիկները որոշել են զոհել հայ ժողովրդին իրենց քաղաքական նպատակների համար։ Յիշեց այդ զէպքերից Դարբաթ-Ձանգեղու-Նախիջուանը Արբըջանին կցելու ձիգերը, «Արեւիկան ժողովուրդների Համագումարը» Բազում, որին մասնակցում էին և Էնվէր ու Թալի փաշաները։ Համագումարի կաշիւներին յետեւը Էնվէրից նկայատանի դէմ պատերազմ՝ յայտառարեւոլ դաւը։ Համագումարից անմիջապէս յետոյ Թալի փաշան բոլշեւիկան սակին աւած՝ Շուշի-Նախիջուան խնուղիով շտապեց զէպի Անգորա։ Յիշեց 11րդ բանակի դաւերը Հայաստանի դէմ։ Յիշեց Կարաբէլիթ Քեաղիմ փաշայի բանակի զինուժը խորհրդային զէնքերով ու բոլշեւիկների համաձայնութեամբ յարձակելը Հայաստանի վրա և այդ պահոււ կարմիր բանակի գործած հակահայ շարժումները Դաղախի ու

Նախիջուան-Շարուրի ճակատներում։ Յիշեց նաև մայիսից սկսած բոլշեւիկների թափած ձիգերը Հայաստանը խորհրդայնացնելու, Լեզրանի առաքելութեան թաքուն նպատակները, ինչպէս նաև Ձիչէրիին ներկայացուցիչ Բուրու Մոլիվանիի խաղաղած չարբաստիկ դերը Անքրանդրապօլում՝ հայ-թրքական հարաուրութեան բանակցութիւնների միջոցին։

Դէպքերի ընթացքը անհրեքելի փաստերով հաստատում է, որ բոլշեւիկների համար հայկական Հարք ու Հայաստան, գոյութիւն չի ունեցել կամ գոյութիւն է ունեցել այն չափով, որ չափով որ Կորկաւոր է եղել իրենց հաշիւների համար։ Տաճիկների հետ վարած բոլոր բանակցութիւնների ու ստորագրած դաշնագրերի մէջ՝ Բրէտտ-Լիտովսկից սկսած մինչև Մօսկա, Հայերը զոհ են բերւած Էնվէրներին ու Մուսթաֆա Քէմալներին։ Եւ, սակայն, այս այսպէս լինելով Հանդիք՝ հայ ժողովուրդը իր այլազան հուանքներով և, մասնաւորապէս, Դաշնակցութիւնը անհաշիւ փորձեր են արել Մօսկայի հետ ընդհանուր լեզու գտնելու և երկու կողմի համար ընդունելի գոյակիճակ հաստատելու։ Նպատակով Մէկից աւելի պատերազմութիւններ են գնացել Մօսկա և ուրիշ քաղաքներ, բազմաթիւ բանակցութիւններ են տեղի ունեցել և եթէ աւրդիւնքը եղել է միշտ բացասական, այդ բանում ամենից քիչ Դաշնակցութիւնն է մղաւոր։ Յիշեց այդ բանակցութիւններից մի քանիսը։

1918 թ. Մարտին, ընկ. Ա. Ջամախանն ու Լ. Նազարեանը, իբրև Կովկասի Հայոց Ազգային Խորհրդի ներկայացուցիչներ և դաշնակցական պատասխանատու գործիչներ, Մօսկայում, բանակցում են Տրօցկու հետ՝ Հայերի և Խորհրդ. Ռուսաստանի փոխարարքերութիւնը ճշդելու և այս վերջինի օգնութիւնը ստանալու նպատակով։ Տրօցկին խորհուրդ է տալիս ղեկնել... գերմանացի բուրժուական շրջաններին և խոստովանում է իրենց անգորութիւնը օգնելու Հայերին։

Քիչ յետոյ, Նոյն նպատակով, Մօսկա են հասնում բժ. Յ. Ջաւրեանը և Բազումը. Խորհրդի և Դաշնակցութեան Կետը. Կոմիտէի ներկայացուցիչը, որոնք երկար ու ձիգ բանակցութիւններ են վարում խորհրդային վարիչների հետ։ Լեւտեանքը լինում է այն, որ մի յիմար ամբաստանութեա իւր բժ. Ջաւրեանը դրւում է բանտ և զոհ է գնում կրած զրկանքների։

Բանակցութիւններ են կատարւում և Կովկասում-Թիֆլիսում Մ. Շահումեանի և դաշնակցական մի շարք գործիչների միջև, Բազում՝ Նոյն Շահումեանի և տեղական մեր պատասխանատու ընկերների միջև։ Բազում, որոշ ժամանակ, Նոյն իսկ տեղի է ունենում գործակցութիւն։

1920 թ. Մայիսին պաշտօնական բանակցութիւններ են տեղի ունենում Հայաստանի և Մօսկայի կառավարութիւնների միջև։ Երկու ամիս Մօսկայում է նստում Շահի պատերազմութիւնը և չնայած որ բոլոր Հարցերի շուրջ Հէնց առաջին օրերին կայացել էր Համաձայնութիւն՝ դաշնագիրը շարտարւեց, որովհետեւ բոլշեւիկները զարտիի դիտումներ ունէին Հայաստանի նկատմամբ։

Այնուհետեւ, արձանագրեց Երեւանի բանակցութիւնները Լեզրանի հետ և իշխանութեան յօտարակամ փոխանցումը բոլշեւիկներին Դեկտ. 2ին, երբ գրեթէ ամբողջ դաշնակցական

ժողովրդականութիւնը մնաց երկրում՝ պատրաստ գործակցելու նոր իշխանութեանը։

Եւ, վերջապէս, Ռիզայի բանակցութիւնները 1921ի ամառը, երբ նոյնպէս Համաձայնութիւնը գոյացաւ Համառուական Կովկասի և Դաշնակցութեան պաշտօնական պատերազմութիւնների միջև, բայց պարագիծ եղած Համաձայնագիրը տարւեց Մոսկու ու այլևս յետ չեկաւ։ Բայժեիկները հրաժարեցին վաերացնել Համաձայնագիրը, որի սակ դրել էին իրենց նահանգական ստորագրութիւնները։

Այս բոլորից նստող կարծիք է սակ, թէ՛ Դաշնակցական կառավարութիւնը բացարձակ թշնամական ղրբք էր բռնել՝ Խորհրդային կառավարութեան դեմ և չէր կամենում բանակցել նրա հետ անգամ Թանկու կառավարութեան չափ։ Անհիշտ է նաև Ջիլերիի և ուրիշների պնդումը, թէ «Անդրդովկանեան կառավարութիւններից Դաշնակցական կառավարութիւնը ամենից ծայրայեղ ղրբք էր բռնել բոլշեիկների հանդէպ»։ Իրականութիւնը ճիշդ հակառակն էր. այն ժամանակ, երբ վրաց և Աբղեջանեան կառավարութիւնները կատարել կերպով հալածում էին բոլշեիկներին, երբ Մեմելի բանտը լիքն էր կոմունիստներով որոնք շաքաթը մէկ հացադու էին յայտարարում, «Դաշնակ» Հայաստանի գոնեքը լայն բացած էին նրանց առջև, Կովկասի բարդ կողմերից Հայաստան էին թափել Հայ բոլշեիկները և ազատօրէն պորշոտն էին ստանում պետական և հանրային հիմնարկութիւնների մէջ։ Մինչև 1920 թ. Յունուար ամիսը, երբ աղեւն յայտնի կերպով երևան եկաւ բոլշեիկների հակապետական դաւադիր գործունէութիւնը, ոչ մի հայաժամեք կամ խորութիւն չի բանեցւել կոմունիստների դեմ, և միայն, երբ յայտնի դարձաւ, որ Արմենկովը (Կոմունիստների Հայաստանի Կոմիտէն) յեղաշրջում է պատրաստում և տեկպոգն աշխատանքների մէջ է, սկսեցին ձերբակալութիւններ և արտօնանք տիէ, առհասարակ, Հայաստանի կառավարութիւնը մեղադրելի էր ծայրայեղութեան մէջ, այդ չէ ծայրայեղ ներդրամտ վերաբերումն էր դէպի քաղաքական մի կուսակցութիւն, որն իր էութեամբ հակառակ էր գոյութիւն ունեցող ռեժիմին և զորակ բարոյական սրբութիւններին։

Հակամարտութիւնն ու թշնամանքը բոլշեիկների և Դաշնակցութեան միջև եղել են ու կան ոչ թէ այն պատճառով, որ Դաշնակցութիւնը «ծայրայեղ ղրբք էր բռնել» ու չի ուզեցել հարտել բոլշեիկներին հետ — փաստորէր հակառակն են ցոյց տալիս — այլ որովհետեւ ընկերային այդ երկու հոռանքները հիմնովին ներհակ են թէ իրենց աշխարհայեցողքով և թէ ընթացիկ քաղաքականութեան ասպարէզում։ Առաջինը կանգնած է փոքրամասնութեան ղրկատարութիւնի գետնի վրա, երկրորդը՝ ջատագով է լայն ժողովրդապետութեան։ Առաջինը ձգտում է բռնի միջոցներով ընկերվարութիւնը պատաստել մի երկրում, ուր ազգաբնակչութեան երեք քառորդը անգրագետ է և արդիւնաբերութիւնը գտնուում է սակաւին նահանգական շրջանի մէջ։ Երկրորդը Համոզած է, որ ընկերվարութեան իրականացման համար անհրաժեշտ է արտաքին պայմաններ և ժողովրդի հասունութիւնը Կոմունիստների համար առանձին ազգերը հում վառելիք են համաշխարհային յեղափոխութեան խարոյկում և հայկական հարցը՝ արդիւնք

մանր-բութօնական քաղաքարարածութեան, Դաշնակցականների համար ամեն ժողովուրդ, որպէս հաւաքական անհատականութիւն, ինքնաթեք է և հայկական։ Հարցի լուծումը՝ անհրաժեշտ պայման հայ ժողովրդի ազատագրութեան Դաշնակցականների համար Անկախ ու Միացեալ Հայաստանի պահանջը արմատական միջոց է հայկական հարցի լուծման, մինչդեռ բոլշեիկների համար անակառուցիւն»-ը ու «միութիւն»-ը արժանազան թոճօնական նահապաշարում։

Տարբեր նպատակներ, տարբեր գործելակերպ։ Գեանքը ցոյց տուց, որ անհնար է այդ երկու հոռանքների միջև որ և է հակացողութիւն և ընդհանուր լեզուա Եւ, սակայն, փոխյարաբերութեան մի ձեւ պէտք է գոյութիւն ունենայ, որովհետեւ եթէ բոլշեիկը փաստական իշխանութիւն է Հայաստանում, Դաշնակցութիւնը՝ Հայ ժողովրդի ճնշը մեծամասնութեան կամքի արտայայտիչն է այդ աշխատադրութեան գանգաձայնի կազմակերպութիւնը։ Արդ՝ ճնն է այդ ձեւը։

Ինտանսն պայմաններում բոլշեիկներին և Դաշնակցութեան փոխյարաբերութիւնը կարող էր լինել իբրեւ կառավարական և ընդդիմադիր կուսակցութիւնների յարաբերութիւն։ Անտարակոյտ, այսպիսի մի դրութիւն ի նկատի է ունեցել և Հ. Յ. Դ. 10րդ. ընդհանուր ժողովը, երբ ցանկութիւն է յայտնել մնայու «քաղաքարարական անհնար պայքարողի ղրբքի մէջ հանդէպ բոլշեիկներին ղրկատարութեան և աշխարհակալութեան»։ «Դադափարական պայքար» արտայայտութիւնը այստեղ հակադրում է «գինւած պայքար» հոսակցողութեան, և Դաշնակցութեան գերազույն ժողովը հրահանգում է իր անդամներին հետեւելու առաջին ուղղութեան։ Սակայն, ինքնին հարց է առաջ գալիս, ինչպէս կարող է իրականացել «քաղաքարարական պայքարը»։ «Ընդդիմադիր» թաղաքականութիւնը մի երկրում, ուր ոչ միայն գոյութիւն չունին այդպիսի քաղաքականութիւն վարելու առարկայական պայմաններ, այլ և դիտակցօրէն հակառակ քաղաքականութիւն է բանեցում տիրող իշխանութեան կողմից։ Ի՞նչով ապահովել «քաղաքարարական պայքարի» հնարաբերութիւնը, երբ կոմունիստական ղրկատարումն չի հանդուրժում, որ իրենից գառ ապրի ու գործի մի ուրիշ ոյծ, որ կարող է մրցակից լինել իրեն։

Այս հարցի պատասխանը ամբողջապէս կախած է բոլշեիկներից։ Եթէ նրանք, վերջի վերջոյ, հոսական ու հաշտեան այն մտքի հետ, որ իրենից դուրս էլ կան գոյութեան իրաւունք ունեցող ուժեր և ըստ այնմ՝ զծեն իրենց գործնական ծագան, «քաղաքարարական ընդդիմադիր» ի ուղղութիւնը կարող է տալ արդաւանայ պատուներ։ Եթէ, ընդհանաակը յամուռն ու միտան իրենց մինչայտօրեայ քաղաքականութեան վրա և «մնչ Դաշնակցութեան» նշանաբանը շարունակելն նկատել գործնական քաղաքականութեան առարկայ, ինքնին հոսականալի է, որ Դաշնակցութեան բարի կամքից ոչինչ դուրս չի գայ։ Այն կարճամտ ու աղաչական յոյսերը, որով օրօրում են բոլշեիկ պարագուները, թէ Դաշնակցութիւնն այլևս դադարիլ է հայ իրականութեան մէջ դրական գործօն լինելուց, հերքում են ճէնց կեանքի փաստերով։ Անխնայ ջանքախրեց և մեր «արեւիկամներին» այն համոզումը, թէ «Դաշնակցութիւնը անխից չունի այլևս» իրականութիւնը հաստատեց հակառակը։ Եւ եթէ Հայաստանի երկրկայ վարել-

# ՔԻՒՐԿԵՐԸ ԵՒ ՀԱՅՆԵՐԸ

Ներք իրենց քաղաքականութիւնը պէտք է շարունակեն հիմնել այս տեսակետների վրա, հետևաբար, անկասկած, կը լինի այն, ինչ որ եղել է մինչև այժմ, այսինքն՝ անողորհ հայտնաբերելու բոլորի կողմից, յամառ դիմադրութիւն՝ հայաճակատների կողմից և վերջին հարուկ, թանկահին ուժերի սպարդիւն վատնումով դործի վրա, որ յայտնապէս դատարարուած է անյարողութեան:

«Բազմաթարական պայքար» խօսքի բովանդակութիւնը հասկացում է այն մտքով, որ խորհրդային վարչիւնը, վերջին վերջոյ, հարկադրուած պէտք է լինեն հանրութեւնու իրենցից դատ ուրիշ հասանքների գոյութիւնն ևս և հարտեւրու այն փաստի հետ, որ հայ կենսի մէջ իր կարծիք գերն ունի նաև Գաշնակցութիւնը, այսինքն՝ զկուստատուրայից անցնելու դեմոկրատիզմի: Այս դեպքում, մենք ևս ի վիճակի կը լինենք լայնօրէն օգտագործելու միակնից կախուած բոլոր միջոցները նպատակու համար Հայաստանի ամբողջման ու զօրացման և հայ աշխատաւորութեան բարգաւաճման: Վարչաձեւի և իշխանութեան հարցը մեզ քիչ է հետաքրքրում, որովհետև մենք գիտենք, ինչպէս գիտէինք և երեկ, որայց հարցերը կը լուծւին ոչ թէ Հայաստանում, այլ Ռուսաստանի կողմնու: Եթէ բոլշեւիկները համար հայ ժողովուրդը միջոց է լուհ հում ինքն իրենց կոմունիստական երազներին հասնելու համար, մեզ համար ինքնամտէք է ու ինքնանպատակ: Ընկերային բոլոր ծրագրերից առաջ մեզ համար կայ մեկ հիմնական ծրագիր — հայ ժողովրդի հաւաքական գոյութեան արահուրումն ու կարգացումը: Այս կը նպատակին, մեր համոզումով, կարելի էր լինի հասնել միայն Հայաստանի ամբողջումով և ուժեղացումով, հայկական ցրիւ եկած զանգաճները Հայաստանում և Հայաստանի շուրջ համախմբելով, Հայաստանը դարձնելով ոչ միայն բնակավայր, այլև բարոյական յեմարան ու քաղաքական ներշնչման աղբիւր բովանդակ հայ ժողովրդի համար: Եւ քանի Հայաստանը գտնուում է և դատապարտուած է որոշ ժամանակ Միասն Թորհրդային իշխանութեան տակ, մենք պէտք է աշխատենք, որ այդ իշխանութեան թերի կողմերը որքան կարելի է քիչ Պետան ժողովրդին, իսկ դրական կողմերից ըստ կարելույն մեծ օգուտ քաղու: «Որքան վատ» այնքան լաւ»-ի քաղաքականութիւնը մերը չէ: Այս է պատճառը, որ Գաշնակցութիւնը, իր ամբողջ ետութեամբ հակառակ լինելով հանդերձ բոլշեւիզմին և սրա հաստատած վարչական ինքնի, իր օրայն մտահոգութեան առարկան դարձրել է ոչ թէ վարչաձեւի բռնի տապալումը, այլ՝ Հայաստանի վերակենդանութեան և հայ ժողովրդի ինքնահաւաքման և բարգաւաճման նպատակու ձգտումը:

Գարտը է Գաշնակցութիւնը այս Խնայարհուցով հասնել շօշափելի արդիւնքի և իր հմայքին և ուժին համապատասխան օգուտ սուլ ժողովրդին: Այդ կարևոր է շատ բաներից, բայց ամենից առաջ՝ Թորհրդային Հայաստանի վարչիւնից, Եթէ սրանց հետաքրքրէ իրական գործը և ոչ թէ կուսակցական «ես»-ը, լաւատես յոյսերը կարող են իրականանալ: Եթէ, ընդհակառակը, բոլշեւիկները շարունակեն Հայաճակատի, բուն տարիկութեան և արքայի քաղաքականութիւնը, եթէ, այսօր այս պէս, Ռուսաստանի բոլոր անկիւնները լեցւած լինեն արքայականներով, իսկ արտասահմանի դեմ միայն ատամներ կրճատեցին, Գաշնակցութեան կը Միայ հաշտ նստել իրականութեան հետ: Հումակերպման և ինքնամտման քաղաքականութիւնը մերը չի եղել երբեք, չի լինի և այսուհետև:

Ոչ մեկ ժողովուրդ իր ճակատագրով, իր պատմութեամբ այնքան չէ շարկապուած Հայերու հետ, որքան քերթ ժողովուրդը: Գեո առասպելական շրջաններէն, երբ մարդիկ ժայռերու վրայ սեպագնու տաւերով իրենց փառքն ու տրեւրութիւնը կ'արձանագրէին, երկու ցեղակիցները իրարու կողքին սարած են անընդհատ: Բազմաթիւ ազգեր ու ժողովուրդներ, Հին Հռոմ, Մակեդոնիա, Պարսիկը, հարաւէն՝ Արաբը, հիսթիսէն՝ Սկիթացին կամ Ռուսը, հեռաւոր արեւելքէն Չինիզի կամ Լէնկիթիսուր խաները, իսկ արեւմտաւորէն Ռիպանկացին և Տաճիկը եկած են յամայն Հայոց ու Քրդաց աշխարհները, և տիրապետած անոնց. բայց բոլորն ալ անցած դացած են: Անոնք ձմրան ձիւնին նման նստած են երկիրներու և ժողովուրդներու կրճէին, ճնշած, չարաբար են երկանդ, բայց յետոյ շողիացեր, անհետացեր են և երբէն ծլած են քերթ ու Հայ ժողովուրդները իրարու կողքին: Տարբեր՝ խառնուածքով և արհեստով, մէկը՝ վաղկատուն և խաշարած, միւսը՝ նստակեաց և հողագործ, երկու հարեաւները յամայն թշնամացած են իրարու հետ, փոխանակ իրար. լրացնելու և ներդրանակ կեանք մը ստեղծելու: Երբեմն ալ, մէկը միւսը փարած է:

Բայց թողունք Հեռաւոր պատմութիւնը և անցնելք մեր օրերուն, պարզելու համար այն հանգամանքները որոնք ճակատագրական դեր կատարեցին երկու ժողովուրդներու յարեւրութեանց վրայ:

Ինչպէս գիտենք, Հ. Յ. Գաշնակցութիւնը առուեսպակէտնուղն էր թրքահայ տառապանքին: Թրքահայութիւնը չունէր ազնուականութիւն. կրօնական տիրապետութիւնն ալ տկարացած էր: Ժողովուրդին մեծամասնութիւնը, 95% Հողագործ և արհեստաւոր, կը շարքարուէր առատապետութեան և բռնապետութեան ճիւղանկերուն մէջ: Դաշնակցութիւնը, իրեն հաջ ժողովուրդին հարցաւորա արտայայտիչը, պիտի դառնար և հայ զեկապիտութեան և աշխատաւորութեան շահերուն պաշտպանը: Այդպէս ալ եղու դեռ 1892ի ծրագրով: Այդ հանգամանքը կուսակցութեան կուտար բնական երեսնթ. Դաշնակցութիւնը արհեստական յղացում չէր, ոչ ալ անհատական ուղեղի ծնունդ: Պէտք է աչքի առնել ունենող ստոր այս հիմնական սկզբունքը և աշխատանքը, եթէ կ'ուղեցը լաւ բնութեւնը հայ-թրքական յարեւրութիւնները: Միւս կողմէ, պէտք է նկատել որ Դաշնակցութիւնը, թէև կազմուած հայ ժողովուրդի շահերուն համար, չունի ազգայնական մոնոպոլիութիւն և ընդհակառակն կ'ընդունի բոլոր ժողովուրդներու ինքնորոշման իրաւունքը և այդ առաջարկութեամբ տրեւած է, իր դրացի Քիւրդը, Ատորին, Գլպաշը և Եղիզին գիտակցութեան բերելու համար: Այս աշխատանքին համար բազմաթիւ նահատակներ ենք ունեցել, Հայ, Լատրի, Քիւրդ, Եղիզի: Դաշնակցութեան ծրագրի այն չիմնական տրամադրութիւնը կուսակցութեան կուտար ոչ միայն հայ ազգային կազմակերպութեան բնոյթ, այլ և զանի կը դարձնէր ազգակ մը առաջատար Ասիոյ յեղափոխութեան և աշխատաւորական գործունէութեան համար: Երբ մը գաշնակցական գործիչներ, քարագրի և նահատակ են եղեր ոչ միայն Հայերու, այլ և Պարսիկներու, Քիւր-

գերու, Եղիզիներու, Ասորիներու, եոյն իսկ Քուրքերու համար: Եփեսոմը Պարսից հաստիսի խանն է, մեր Ֆեդայիին և գործիչը: Ինքսիմի Քուսին և ընկերը մեր Ֆեդայիներն են. բայց առաջնորդներ և Գլխապետներու համար: Չաւէնը երիտասարդ քարոզիչն է Դաշակեցոյութեան, բայց և Նահատակ Քիւրդերու համար: Բայց շատ երկար է այս շարքը:

Դաշակեցոյութենը առաջին օրէն իսկ կը ձգտի արձնել այն միտքն հայ ժողովուրդը, այլ և անոր անմիջական հարեւանները, Քիւրդերը, Դըլպաշները, Եղիզիները, Ասորիները: Այդ փոքր ժողովուրդները բնիկներն են հայկական բարձրաւանդակի կամ անոր շրջապատի, և ոչ թէ ժամանակաւոր հիւրեր: Բացի այդ իրական կացութենէն Դաշակեցոյութենը պէտք էր մասնաւորապէս ծանրանար այդ չորս ազգերուն վրայ և այն պատճառով, որ այդ բնիկ հայրենակից ժողովուրդները կը գտնուէին միեւնոյն բունութեան և հայածանցին տակ. բոլորն ալ ենթակայ էին տանք՝ տանկական լուծին, աւելի կամ պակաս շարժերով: Դեռ յիշեց յիշեր այն հանգամանքը, որ հարկաւ ու հազար տարիները պիտի այդ ժողովուրդները աւելի հասկանալի դարձնէին իրարու և հարթէին ցեղային, ազգային խտրութիւնները:

Առաջին իսկ թափով Դաշակեցոյութենը կը յաջողի իր գործունէութեան շրջանակին մէջ աւելի Ասորիներն ու Եղիզիները, և զանոց յեղափոխի իր աշխարհագրացեցին համաձայն: Դաշակեցոյութեան երկար ժամանակուայ պայքարի ընթացքին, մինչև այսօր կարելի չէ ցոյց տալ դեպք մը ուր այդ երկու ժողովուրդները հայաուսական ըլլային և զէնք վերցնէին Դաշակեցոյութեան դէմ: Ընդհակառակն Սալմաստի, Ուրմիոյ, Վանի Նահանգի բազմաթիւ Ասորիներ կազմակերպուած էին Դաշակեցոյութեան ծրարով: Մենք այնտեղ կը տեսնէք Ասորի դաշակեցական կոմիտէներ, ենթակոմիտէներ, խումբեր, յար և նման հայկականներ, կը տեսնէք ասորի դաշակեցական գործիչներ, Ֆեդայիներ Սահակի, Գրէի և ուրիշներու, նման, որոնք կը մասնակցէին Բանաստի արշաւանքներուն, Վանի դէպքերուն, սահմանային բազմաթիւ կռիւներու, և Վասպուրականէն մինչև Պարսկաստան եղած արշաւանքներուն ու նահանջներուն, կողք կողքի, միեւնոյն նպատակով և միեւնոյն աշխարհագրացեցով: Մենք կը տեսնէք, որ ասորի զանգուածներու եոյն յեղաշրջումը կը վարչակ էր նաև բոլոր խաւերը. նետտորակա՞ն Մարշիմոններ կրօնական եղբայրակցութիւն կը հիմնեն լուստորակականներու և կաթողիկոսներու հետ, և մարտական Մարշիմոններ կը գործեն դաշակեցական խումբերու և զինավարներու հետ: Այսօր փաստ է որ երբ Հայը Հայ և մտացի և Ասորի՝ Ասորի, —ինչ որ Դաշակեցոյութեան իտեպան է եղած— այդ երկու ժողովուրդներու շահերն ու տեսակէտները այնքան են նոյնացած, որ դժուար է որոշել թէ ո՞ր կը սկսի հայկական շահը և ո՞ր կը վերջանայ ասորականը. այսօր համարենք մէկ ազգութիւն և կարգուած, հայաստրական. մասնաւոր պարսկական երկիրներու և Անգրկովկասի մէջ:

Նոյնը և աւելին պիտի ըսնէք Եղիզիներու մասին: Լեզուով տարբեր այդ փոքրիկ ժողովուրդը, իր բախտը կապեց հայ ժողովուրդին՝ աւելի շատ Դաշակեցոյութեան հետ. կազմակերպուեցաւ Դաշակեցոյութեան շնորհիւ, Գովկասի և Տանկաստանու

տանի մէջ, Հայաստանի բոլոր պայքարներուն ստեղծաւորաւ Դաշակեցոյութեան կողքին. միասին զայնքն մեր դաշակեցոյութիւններն և ուրախութիւնները՝ նոյն իսկ հեռուար Սիւնուբարի դիտար եղիղի շէյխը կը յանձնարարէ իր ժողովուրդին աշխատիլ Հայաստանի ազատագրման, ուսում և կրթութիւն առնել հայ գրով ու զերբով:

\*\*\*

Արդեօք եոյնանման շանքեր թափուեցան Դաշակեցոյութեան կողմէ Գլխապետներու և Չաւէններու մէջ, որոնք աւելի կարեւոր թիւ կը կազմեն և աւելի մեծ արժէք ունին քաղաքական տեսակէտով:

Այո, և շատ աւելի քան Ասորիներուն և Եղիզիներուն մէջ: Դեռ 1894ին Վանի Նահանգին մէջ և պարսից սահմանին վրայ Պեթօ, Տէրոյեան, Վարդան, Իշխան, Սամսոն և ուրիշները կը ջանան կազմակերպել քերթ ժողովուրդը: Անկապատ էր հողը և ընդհանրապէս հակահրոսութիւն առաջ կրօնաց դեպի հայ յեղափոխութիւնը. բայց կը գտնուէին հասարակ ժողովուրդէն համակիրներ և նուիրուած Քիւրդեր, որոնք իրենց կեանքը սպաս կը դնեն յեղափոխութեան: Քիւրդ ժողովուրդի վարիչ գրասկարզը կը Ֆայ թշնամական: Միայն Տէմիսիանի Տէյիս Սըւլէ խորհուրդ կուտայ իր հաստացեալներուն. գործիչ չղտուակ «խային Ռումի» (թուրք) և շմանակցիլ կուտարաններուն: Թաշրոզ շրջաններուն եոյն աշխատանքը կը թափուի Վարդաշէի, Արամի, Գումսի, Իշխանի ձեռքով Վասպուրականի մէջ, իսկ Պիթիսի, Կարիկի Նահանգներուն և Խարբեղի մէջ՝ Արտոտի, Փիլոսի, Արմենակի, Հրայրի, Գէորդ Զաւառի և ուրիշներու զինավարութեամբ: Այս վարիչները իրենց քարոզներով ամէն միջոցի կը դիմեն քերթ ժողովուրդը լուստորներու և զոնէ չէղքը դիբի մէջ պահելու համար: Քարոզութիւնը կը կատարուի դիտարապէս բայց դատուն մէջ, շարք մը նահատակներով, ինչպէս Ջիւրաթի Մանսուրը, Գանձակեցի Զաւէնը, Աւգառնիցի Սէյտօսն, Չուխուրցի Ջընտօն ևն.: Մեր գործիչները կ'աշխատին իրաւախոհութեան զայ, կրօնական գասի դիմադրութիւնը մեղմուլու համար բացատրութիւններ կուտան, զիջումներ կ'ընեն և պայմաններ կը մշակեն, ինչպէս Մ. Շէյիս Սըւլէի հետ, Վ. Իթզանի Տէյիս Սայիդի հետ, որ ապատմեցաւ 1913ին, Վարդան Վարդապետ Սիւնի Տէյիս Մալիանի, Նազիրանդիկերի հետ ևն., որոնց ներկայացուցիչ Մոլլա Մէլիմը կախական բարձրացաւ 1914ին Պիթիսի մէջ: Կարգ մը գործիչներ և մարտիկներ եոյն իսկ ինամիական կապերով կը կապուին բեկիկի և շէյխերի հետ: Այս շարքէն էին Հասան շաուշ Կիմեցի, Թմուրը, Կիմեցիականցի Աւտարը, Աւաքել աղան, Մաշաթի Աւտարը, Քուսին, որոնք երկար տան գործիցի իթզանի և Տէրսիմի շրջանները թողունեցան և աշիրթիներուն մէջ: Ամէն ջանք թափուեցաւ, ամէն զիջում եղաւ, որպէսզի Քիւրդերն ալ շարժին բունակալութեան դէմ, կամ զոնէ չկուտորեն հայ ժողովուրդը: Կապերունցած ենք Հայաստանցի, Հանանցի, Արբանցի, Թուրքիցի, Բոզըլցի, Մուլանցի, Բազկանցի, Բազրանցի, Տէկօտուն, Լարգանցի, Խուլբեցի, և այլ բազմաթիւ աշիրթիներու հետ, յանախ թանկազին զոհեր տալով: Զէ մոռցուած նաև

անոնց մտաւոր դասը: Քիւրդ մտաւորականներու հետ թերթ հրատարակուած է արտասահմանի մէջ, բանկցութիւններ կատարուած են և նոյն իսկ պայմաններ կնքուած են զանազան աւիթիներով Ջանք չէ խնայուած Քիւրդներու մէջ ուսում տարածելու համար. բացուած են դպրոցներ, ինչպէս Բոնաչէնի, Փրշինքի և Պըզնիքի դպրոցները հինգ հասո:

Դժուար է թուել բոլոր շահերը մտաւոր, բարոյական թէ նիւթական: Ամբողջ պատմութիւն մըն է այդ, լեցուն՝ զոհողութիւններով և անհարկի տաժաններով: Ըսենք, կարճ խօսքով, թէ Դաշնակցութիւնը իր մտքի և ուժի կարեւոր մէկ մասը վասնակ է քերդ-առանկան համագործակցութիւնը ազգակցիւր, բայց իբրև արդիւնք՝ ստացած է շատ քիչ բան. աստիճան մը չէզոքութիւն, բայց աւելի շատ թշնամութիւն և ջարդ: Քիւրդ հոգեւոր դասը ընդհանրապէս հայ կոտորելը համարած է հաւատարմութեան նշան խալիֆայութեան և համապատասխան Շերիաթի, Գուրանի: Եթէ Կոփ Մահմատ, ներք, Սիլ բէկերը, Գասըմ, Դուրիշ և այլ աշիրէթապետներ որոշ բարեկամութիւն ցոյց տուած են, կամարիէ զորագունգիքը Հաւատարմութիւն կապուել էին Սուլթանին, կոտորելով բախտակից ժողովուրդը: Ունեցեր ենք բայս դասէն փոքրիկ խմբակներ, անհաստեր, Մըստօ, Փլլիթ, Նազըմ, Հասանօ, Ազգո որոնք իբրև հայ ֆէդայիներ կանգնած են Դաշնակցութեան դրօշի տակ և մեծ հերոսութեամբ նահատակուած իրենց իսկ ցեղակիցներու ձեռքով. բայց բայս զանգուածն ալ կը մնար անտարբեր կամ հլու գործիք իր բէկերուն և կրօնաւորնեւրուն ձեռքը:



Ինչու Դաշնակցութիւնը անյաջողութեան մասնունցեալ Պատմաւոր պէտք է փնտռել թիւրք կառավարութեան քաղաքականութեան և քերդ մտայնութեան և ընկերային կարգ ու սարքին մէջ:

Քիւրդը, ինչ կրօնքի, ազանդի և լեզուի ալ պատկանի, բաժնուած է շորս գասակարգի ա) Փառահազկան կրօնականներ, բ) Թուռուներ, գ) Աշիրէթներ, դ) Բայաներ: Առաջին գասի շէյխերու համար միւս երեք գասերը ենթականք են, նիւթական ու բարոյական աղբիւրներ. քրիստոնեաները կեանքուներ են, որոնք բայանէ ալ վար ըլլալով, իբրև նիւթական աղբիւր պիտի ծառայեն Նրկրոյդ դասակարգը Թուռուները, միջնագարեան ազնուականներ են: Աստի կրօնավճի, բայց կը յարգեն շէյխերու հնդիւնակութիւնը, իրենց ենթակայ կը համարեն աշիրէթները, որոնք զինուորականներ են և որոնց ուժի ղեկավարը կը հանդիսանան ժառանգակաւորէն: Թուռուին համար բացի աշիրէթէն և շէյխերէն մնացած բոլորը բայաներ են, ըլլալ քիւրդ, հայ թէ ասորի. անոնք բոլորը հպատակներ, կրօն կալիք են, պարտական՝ կերակրելու և պահելու զիրենց և իր աշիրէթը. տալու աշխատանք և գրամ Որսէ անհնազանդութեան հետեանքը շարժարանք է և մաշ: Երրորդ գասը, աշիրէթը, հլու գործիքն է Թուռուին, շէյխին, բայց նաև աշիր բայս գասուն՝ Թուռուին միջոցով: Զորբորդ դասը, ոչայաքը կը բաժնուի երկու մասի, իւրով՝ քիւրդեր, և քրիստոնեաներ, Հայերը և միւսները Թուռուին և աշիրէթին համար մեծ տարբերութիւն չունին այս երկու գլխաւոր բաժանումները, կը բաւէ որ անոնք լաւ կատարեն իրենց պարտ-

քեր. բայց իրականին մէջ ռայաթի մէկ մասը՝ քիւրդերը մնացեր են տղիտութեան և սարկութեան մէջ, ինչպէս հին սովորութիւնն էր. իսկ միւս մասը, Հայերը արթնցրել էին, ուսում տաւ և յեղափոխուած: Վերք ըսինք որ Դաշնակցութիւնը թէև հայ ժողովուրդէն (քրիստոնեայ) ձեռք, բայց իր աշխարհահայեացքով եկած էր հարթելու կրօնքի, դաւանանքի տարբերութիւնները: Ուրեմն իր դէմն պիտի ունենար մոլեւաւորները և իսլամական գաղափարի գերիները: Ատկէ զատ, ան իր աշխատարական, գիւղացիական գաղափարներով կրօնած էր ռայս դասը ազատելու շէյխերու, Թուռուներու, աշիրէթներու լուծէն, հետեւաբար անոնք իրենց շահերու կրողովով պիտի հակառակէին բարեփոխման, իսկ քիւրդ ռայս բազմութիւնները կը հիւսնէին սարկութեան, տղիտութեան և հարեկման ազդեցութեան տակ: Այլպիսով Դաշնակցութիւնը որպէսզի յաջողէր զլուս հանել հայ-քրդական ներդաշնակութիւնը, ամենէն առաջ ստիպուած էր յեղաշրջել քրդական հոգեբանութիւնը և տիրող կարգաւարքերը: Իսկ այդ սիդիֆեան աշխատանք մըն էր, որուն ձանդութիւնը պիտի փշրէր զինքը մը մնար մէկ լուսաւոր կէտ — Քիւրդիստանի անկախութեան գաղափարը: Բայց 50% կրօնական, Թուռու և աշիրէթ գասակարգերէ բաղկացած քրդութեան համար որն էր աւելի ձեռնառու, Հաւատարմութիւնը, ոչայաքը, թէ Թըքական գերիշխանութիւնը: Այդ 50% կը գեղապատէր վերջինը, քանի որ առաջին պարագային իրենց գոյութիւնը և դասակարգային շահերը պիտի ձեռնառնէին: Եհա այս հանգամանքի էր որ անյաջողութեան մասունք Դաշնակցութիւնը և առաջ քերդ հայ-քրդական հակամարտութիւնը, մէկուն միջոցաւ կոտորել ստով միւսը, զժրգախտացնելով նրկուրն ալ:

Դաշնակցութեան գործը աւելի քան կը ձանրացնէր Թուրք կառավարութիւնը: Սուլթան կամիտը, յեղափոխական ամեն մէկ փորձ արմատէն կտրելու համար, ուժ կուտար համխուսմութեան, կը շոյնէր բոլոր կրօնաւորներն ու միւնեանդները և կը բռնէր զանոնք միւս ցեղերու աղբիւրութիւններէն: Այսօր կախազան բարձրացած շէյխերու ձեռքով կը շարժէր հպարտաւոր Հայեր և ուրիշ քրիստոնեաներ: Իսկ միւս կողմէ Թշնամի ըլլալով ինչպէս Հայերուն՝ նոյնպէս և քիւրդ ժողովուրդին, կը ձգուէր չէզոքացնել յեղափոխական, աղբային շարժումները, խղղիլ զանոնք նոյն ինքն Քիւրդերու միջոցով Փոխանակ ուսումի, խաւարը կը տարածուէր, մանաւանդ ըստ յաներու մէջ, իսկ Թուռուները, աշիրէթները կը խրախուսէին և ուժեղանալով կը կամակարգուէին իբրև Համարի օրէնքի կարգ կ'անցնէր տարբեր ձեւերով և անուններով. պատուանշաններ, պաշտօններ, դրամ, գէնք, ձի և տիտղոսներ հեղափոխական կը հոսէին Քիւրդիստանի վրայ, շրտացնելով աշիրէթները: Այս վերջինները կրօնալի ալկովի բարիքներ և իրաւունքներ լուսու ազատ Քիւրդիստանի մէջ: Ուրեմն, անոնք ալ իրենց կարգին, կը հայտնէին իր մասին Հայերը, այլ և քիւրդ բայան, մտնալով որ այս ծառայան դէպի անդունդ կը տանք թէ զիրենց և թէ ժողովուրդը:

Այսօրուան կախազանները դժուար թէ կառուցուէին, եթէ քիւրդ շէյխերն ու բէկերը իրենց նախապէս կախազան հանած ըլլային հայ և քիւրդ բայս ժողովուրդները:



••

Ինչ է այս բոլորին եղբակացութիւնը:

Ինչպէս բացատրեցինք անցեալ անգամ, շատ պարզ է Քուրբիոյ ծրագիրը ոչ-Քուրբ ազգութեանց Հանդէպ, Քուրբիոյ Համար Հայաստան և Քիւրդիստան արժէք ունին ոչ միայն տնտեսական, այլ և ռազմական տեսակետով: Այդ երկիրներով պիտի պաշտպանուի Անատոլիան արեւելքէն, Հարաւէն և Հիւսիսէն. այդ երկիրներն են որ կ'իշխեն արեւելքի և Հարաւի վրայ, որոնց մասին Քուրբը ունի նուաճողական ձգտումներ: Այդ երկիրները կամուրջներ են, անցնելու Համար ռուսական և պարսկական Ասրպատականները, որոնց բնակիչները Քուրբը կը Համարուին, և թերևս Հասնելու մինչև Հնդկաստան, մինչև Ալթայ լեռները: Այդ կամուրջը ապահովելու Համար, անհրաժեշտ էր կամ թրջացնել Հայերն ու Քիւրդերը, կամ բնաջընջել դանոնք և Քուրբը գետեղել անոնց տեղ: Ուստի, նախ Հայերը ոչնչացուցին Քիւրդերուն միջոցաւ, աստիճան մը լայնելով, իսկ քրդութեան ուժը, ազգային միութիւնը խանդարելու Համար, Հրահրեցին կրօնական կիրքերը, խրախուսեցին թուռուներու և աշիրէթներու ստոր բնազդները, որպէսզի ստրկութեան և տգիտութեան մէջ թաղուի Քիւրդ ժողովուրդը: Այս քաղաքականութիւնն ալ իր տրամաբանական վախճանին Հասաւ և Քիւրդերը մնացին միմեկի, դեմ առ դեմ Քուրբը կռավարութեան և անոր դիպակին ծրագրութեան Հետ:

Նստուանքը, — այսօր նոյնան վտանգուած են Քիւրդերը որքան, երէկ, Հայերը ամբողջութեամբ, կաթողիկոսէն մինչև վերջին Հովիւր, յիպոփոխական ռազմիկէն մինչև Հակայեղափոխական խանութպանը: Իրենց ճամբուն վրայ եղած խաչնիւղտները վերցնելու Համար, Քուրբիս ի Հարկին պիտի Հարուածէ նաև Վրացիները և Պարսիկները, Ուրիմն, սխալ չէր Դաշնակցութեան քաղաքականութիւնը իր դրօշներով Հանդէպ, բայց Քիւրդերը խելքի չկան: անոնք իրենց տգիտութեամբ և քաղաքատուութեամբ գերեզման Հասցուցին մեզ, առանց բան մը շահելու:

Այսօր դարձեալ կը զուգարդպին մեր շահերը: Քանի Քուրբիան կը շարունակէ փոքր ազգերը ձուլելու բնաջնջելու քաղաքականութիւնը, Հայաստանն ու Քիւրդիստանը իբրև կամուրջ գործածելու Համար, ճնշելով Հարաւէն և Հիւսիսէն, ինչպէս ընկալց մը մուրճին և սալին միջև. քանի ան կը սպառնայ արևական ցեղերուն, բնական է որ մեր աշխատանքը պիտի ըլլայ Քիւրդին Հետ, թէև խորապէս խոցոտուած է մեր օրերը: Մարգարեական խնդիր մը չէ այս, այլ քաղաքական և ֆիզիքական: Մտաւար Արեւելքի բնիկ ժողովուրդներուն Համակեցութեան և ինքնորոշման շահն իսկ այդ կը պահանջէ: Հիմա որ, նոյն ինքն Քեմալի ձեռքով քանդուած են կրօնական նախապաշարութեան և մէկրի զբրւած է Համախառնական քաղաքականութիւնը, Քիւրդերը պէտք է քայնն այն ճամբէն որ տարիներ առաջ քարոզուեցաւ իրենց, անհարկն զոհողութիւններով: Ընկիրթի ըրեւած քաղաքականութիւնն ալ իր կարգին կը Հարթէ շատ մը գիտաբութիւններ: Այլ ևս Քիւրդ ժողովուրդին մէկ մասը շնորհներ չի վայելիր ի միաս խոնարհ խաւերուն. իսկ Հայաճանցները, կախապանները կը նպաստեն տարածելու Հաւասարութեան և ազատութեան օգիւղները, խորացնելու Քիւրդ ժողովուրդին ազգային դիտակցութիւնը:

Քիւրդ մտաորականներուն և յիպոփոխականներուն կը մնայ այս ուղղութեամբ գառտարակել իրենց ժողովուրդը, և խրատուիլ անցեալի ու ներկայի փորձառութիւններէն: Մենք անխախտ կը պահենք մեր նահատակ ընկերներուն աւանդութիւնները, բայց լայնողութեան Համար պայման է որ Քիւրդերը իրենք ըմբռնեն թէ բնաջնջման վտանգը զամոկիտան սուրի մը պէս կախուած է նաև իրենց զլխուն:

ՌՈՒՌԷՆ

### ՄԻՋԱԶԳ. ԿԱՊԻՏԱԼ ԶԱՆԿԵՐՈՒՄ

Ճրանական խորհրդարանու մեջ:  
Պատգ. ԴՌՌԻՈ (Կունուուիստ). — Միքանի ժամանակից ի վեր ընկերներն և նս որակում ենք իբրև դաւաճաններ: Դաւաճան հմ Հանդէպ. կապիտալիստական ղէժմիմ: Մենք նրան ոչ մի խոտում չենք տեսել:

ՔՐԻՄԸ (Արտաք գործ. Նախարար). — Ճիշտ է, դուք նրան ոչ մի խոտում չէք տեսել, սակայն կարծում եմ, որ ձեր ղէժմը նրանից շատ բան է պահանջում: Այդպէս եմ կարծում ի նկատի ունենալով այն բազմաթիւ տնտեսական յանձնախումբերը, որոնք գալով այնտեղից (սակնարկ Ռուսաստանի մասին) քարք են գալիս ամենայնուրեք դրամատէրերի և սեղանաւորների նախասննեակներով (ժայփն էր ժիմաղ):

Պատգ. ԴՌՌԻՈ (Կունուուիստ). — Նս դրան կը պատասխանեմ իր տեղը (ժիմաղ):

Իզուր կը լինի օրոնել նրա ճառի շարունակութեան մէջ այս պատասխանը: Դորիօն ոչինչ ունի աւարկելիք պարտն նախարարի Հեղանքի դէմ, որովհետև գիտէ, թէ ինչքան դառն ճշմարտութիւն կայ թաղուած նրա մէջ: Չէ որ ամենքիս պէս նա էլ իրազեկ է այն ստորացուցիչ իրադատութիւններին, որոնցով Ռուսաստանի խորհրդային ժողտանութիւնը տարիներից ի վեր, ճգնում է դէպի իրին քաջի բոլոր երկիրների «պոռնիկ կապիտալիստներին»...

Այլ սիրաբանութիւնները, բողոչիկների ասելով, սկսեցին այն օրից, երբ Լէնինի «Հանձնարիչ ներշնչումով» նրանք վերջապէս ըմբռնեցին ընկերվարականների կողմից բազմիցս կրկնուած այն ճշմարտութիւնը, թէ թալանների ճանապարհով չէ, որ պիտի գայ ընկերվարական իրաւակարգը, այլ քրտանջան ստեղծադրածական աշխատանքի միջոցով:

Սակայն էապէս նրանց Համար վճառուանը այս դիտակցութիւնը չէր, այլ այն Հանգամանքը, որ խորհրդային իշխանութիւնը իր եռամսյ թալանի քաղաքականութեամբ և «կոմունիկատական» ինչպա փորձերով երկրի տնտեսութիւնը Հասցրի էր այնպիսի քայքայման, որ եթէ անմիջապէս շղարմանէր՝ աճաւոր փլուզումով պիտի պայթէր ամենից առաջ Հէնց իրենց, օրուս իշխանաւորների զլխին: Թէ ինչ աստիճանի էր Հասել այդ ժամանակ քայքայումը, երևում է Հետեւեալ տոկոսային Համեմատութիւնից, որ անում է բողոչիկեան «Էկոնոմիչեսկայա ժիւզն» թերթը՝ 1913 և 1920 թւերի տնտեսագործութեան մի քանի ճիւղերի միջև.

\*) Տես Le Temps 24 Յուլիս 1925:  
\*) Տես Կրուսինի յօդուածը 1921 թ. Մայիսի 27 և 28 համարներում:  
A.R.A.R.®

	1913 թ.	1920 թ.
Երկրագործութիւն	100 . . . . .	2. 25
Սնդկ արտադրութիւն	100 . . . . .	17
Նաւթի արտադրութիւն	100 . . . . .	40
Քարածուխի արտադրութիւն	100 . . . . .	20
Երկաթի արտադրութիւն	100 . . . . .	2.12
Մեքենագործութիւն	100 . . . . .	25
Քամբակագործութիւն	100 . . . . .	5.6
Պտտաշարժութիւն	100 . . . . .	25
Նաքարագործութիւն	100 . . . . .	6

Եթէ որա վրայ աւելցնենք և հացի արտադրութեան նւազումը 40(90% ) պարզ կը լինի, թէ ժողովրդական զանաւանների աքաղաղութիւնն ու թշուառութիւնը կը սաստիճանի էին հասի բոլշեւիկեան տիրապետութեան իրորոջ տալում:

Այս համատարած թշուառութեան հողի վրայ առաջացած ժողովրդական շարժումները մաշու և կեանքի խնդիր էին դարձրել բոլշեւիկների համար տնտեսութեան վերականգնման գործը: Եւ որովհետեւ դեռ նրանք՝ գերպայնցորէն մարզած դաւադրական և քաջաջիջ գործերի մէջ՝ միահիգամայն անպէտք էին տնտեսական վերաշինութեան կամ ստեղծագործութեան համար այդ պատճառով նրանց այլ բան չէր մնում, բայց եթէ դիմել կապիտալիստների գործակցութեանը:

Բայց ինչ սակ այսպիսի մի գործակցութեան համար կուտակցական շարժելին: Ձէ որ ույ շարքերի աչքում կապիտալիստները հանդիսանում էին իրեն մի արխանարու վոհմակ, որի Ֆիդելիական ոչնչացումը անհրաժեշտ նախապայմանն էր կազմում աշխատաւորութեան ազատագրութեան համար: Ձէ որ այդ վոհմակի շահագործումը ի չիջ դարձնելու համար է, որ լայնածաւալ Ռուսաստանի ժողովուրդները մատուցել էին քաղաքացիական կուսի արհաւիրներին...

Թօքերը երբեք չեն պակասել բոլշեւիկների իրենց արարքները պատճառաբանելու համար — չպակասեցին և այս դէպքում: Նրանց հրապարակագիրներն ու հրապարակասուները սկսեցին պատրաստել «Հանրային կարծիքը», մատուցելով փոխանցման ջրջանում (կապիտալիզմից դէպի կոմունիզմ) կապիտալիստների կատարելից դրական դերի մասին, որակեցին կապիտալիստներին գործակցութեան հրաւիրելը իրեն մի ռազմագիտական նահանջ, որ անգամ յաղթական արշաւանքներով ժամանակ սովորական բան է, անկարելիք արին այն մասին, թէ Ռուսաստանի բնական հարստութիւնները կուտակածոր գործելով եւրոպական և ամերիկեան կապիտալիստների միջև՝ պիտի իրարանցում առաջացնեն բարձրագույն աշխարհում և դրանով արագացնեն համաշխարհային յեղափոխութիւնը ևն ևն:

Անոջ, դէպքերի յետագայ ընթացքը իրաւ մերկացնելու այս «պատճառաբանութիւնների» սնանկութիւնը ամբողջ աշխարհի առաջ: Այսօր միամիտների համար իսկ պարզ է, որ բոլշեւիկեան նահանջը կապիտալիզմի հանդէպ ոչ թէ ռազմագիտական, այլ խուճապալին լնայթ է կրում, ինչպէս և պարզ է այն, որ նրանք համաշխարհային յեղափոխութեան կարօ.

տից մղւած չէ որ, «քարշեն զալիս կապիտալիստների և բուսիկների նախասնեակներում»...

Սրբ աչքի առաջ էք բերում բոլշեւիկներ և կապիտալիստների փոխ-յարարբերութիւնները, սկսած 1920 թ.ի վերջերից մինչև օրս, իսկական կատուի և մկան խաղի պտուկերն էք ստանում: Եւ այդ անարժան խաղի մէջ կատուի դերը կատարող բոլշեւիկները չեն:

1920 թ. նոյեմբերի 23-ին լոյս տեսաւ այն դեկրետը, որով Ռուսաստանի խորհրդային իշխանութիւնը մեկաշնորհների իրաւունք է տալիս կապիտալիստներին՝ այդպիսով առաջին խոշոր ձեղքը բանալով արդիւնաբերութեան ազգայնացման եթէ ոչ սկզբունքի գոնէ փաստի մէջ: Այդ դեկրետի հիման վրայ կապիտալիստներին իրաւունք էր տրուում, ի միջի տլլց, կապալով և այլ պայմաններով ձեռք բերել ընդարձակ հողեր հարստային Ռուսաստանի նահանգներում և վարձաւ աշխատանքի միջոցով շահագործել:

Մասնաւոր կապիտալիստական կարգերի վերահաստատման այս առաջին քայլը ժամանակին շատ ասէ-կոսէներէր, շատ հիասթափութիւնների և հեղինակների տեղիք տաց. սակայն սպասած արդիւնքը չտուաւ խորհրդային իշխանութեան, որովհետեւ արտասահմանեան կապիտալիստները, մի երկու անհայն թոցաւորութեամբ, թթու դէմքով պատասխանեցին բոլշեւիկեան սիրածպիտ առաջարկներով:

1921 թ.ի գարնանը հաստատուեց Ռուսաստանում այսպէս կրւած « նոր տնտեսական քաղաքականութիւնը », որ աւելի խոշոր, աւելի հրապուրիչ շահերի մի ընդարձակ ապարէր էր բանում կապիտալիստական աշխարհի առաջ: Տեղը չէ այստեղ ձանրանալ այն ստակալի տնտեսական և քաղաքական տախտակ վրայ, որ հարկադրեց բոլշեւիկներին « նոր տնտեսական քաղաքականութեան » վերադառնալ: Բայց որ նրանք այս նահանջը դէպի կապիտալիստական կարգերը համարում էին շատ լուրջ զիջումն ի հաշիւ իրենց սկզբունքների՝ այդ երեւում է այն բացատրութիւնից, որ տալիս է Լէնինը « նոր տնտեսական քաղաքականութեան »: 4921 թ. հոկտեմբերի 17-ին կոմունիստական մի կազմակերպութեան առաջ նա հանդէս է գալիս մի ձառով, որի մէջ, ի միջի այլոց, առում է.

« Մեր նոր տնտեսական քաղաքականութիւնը ըստ էութեան այլ բան չէ նշանակում՝ բայց եթէ այն, որ մենք « անմիջապէս (կոմունիստական տնտեսակարարը հաստատելու) « այդ փորձի մէջ իրիտ պարտութիւն ենք կրել և ռազմագիտական նահանջի դիմել: Քանի մեզ վերջնականապէս չեն « ջախջախել՝ պէտք է մենք յետ քաշուինք և ամեն ինչ նոր, « բայց աւելի ամուր հիմքի վրայ կառուցանենք: Մենք կու « մեկնախտերս շղէտք է կապիտալիստները այն մասին, որ « մենք տնտեսական ձակաւոր վրայ տնտեսական պարտութեան « ենք մատուցել և այն էլ շատ ձանր ենուով:

Այս ռազմագիտական « նահանջը » դեկրետային յայտարարութիւններով շահամանափակեց. նա ահապին փոփոխութիւններ առաջ բերեց խորհրդային երկրների ընկերային-տնտեսական քաղաքականութեան և իրաւական կառուցւածքի մէջ: Նրա Ֆինանսական և դրամական գործառնութիւնները փոխեցին, ներքին աւետարը արտօնեց, դրամատները վերա-

\*) 1913 թ. առեւտրում է մօտ 3 միլիարդ փութ հաց, իսկ 1920 թ. միայն 1.8 միլիարդ փութ:

բացեցին, մասնաւոր սեփականտիրական կարգեր վերահաստատեցին, միջազգային յարաբերութիւններէ մէջ Ռուսաստանը մտնեցաւ բուրժուական պետութիւնների կողմից կիրառուած նորմաներին ևն. ևն.:

Սակայն չնայած այս ամենի՝ խորհրդային իշխանութեան բոլոր փորձերը՝ դէպի Ռուսաստան քաշելու արտասահմանեան կապիտալիստներին՝ զերթէ ամբողջովին անարդիւն անցան: Չերջիններս եղած գիշումները դեռ բաւարար չէին նկատուած իրենց քսակները բուշուիներէ առաջ բանալու համար:

Թէ ինչ էին պահանջում նրանք բուշուիներից նրանց հրահեղներին ընդառաջելու համար՝ երևաց յետագայ տարիներին:

1922 թ. գարնանը տեղի ունեցաւ Ճինովայի Խորհրդածողը, որին մասնակցելու էր հրապարակաւ և խորհրդային Ռուսաստանը: Չիչերինը իբրև վերջինի ներկայացուցիչը յայտարարեց այնտեղ, որ Ռուսաստանը պատրաստ է միլիոնաւոր հնկար պողոտքեր հողեր արամադրել կապիտալիստներին մշակութեան համար, պատրաստ է տալ նրանց հարուստ անտառներ, քարածուխի և հանքերի կոնսոխիտներ մասնաւորապէս Սիբիրում, և ամէն տեսակի մնաշնորհներ՝ խորհրդային բոլոր երկրներում: Նա մտանշեց, որ խորհրդային իշխանութիւնը, համաձայն «նոր տնտեսական քաղաքականութեան», այնպիսի օրէնքներ է մշակել, որոնք անհրաժեշտ են բուրժուական երկրներէ և Ռուսաստանի տնտեսական գործակցութեան համար՝, և վերջապէս առևտրական պատերազմութեան կողմից առաջարկեց մի բանաձև, որի երկրորդ կէտով պիտի տրւէին

« Ընձանկան և սեփականութեան իրաւունքի օրէնադրաւ և կան, դատական և վարչական երաշխիքներ այն օտարերկրացիներին, որոնք ցանկանում են Ռուսաստան զնալ այնտեղ տնտեսական գործունէութիւն ունենալու համար: »\*\*)

Մինչեւ Չիչերինը Խորհրդածողում Ռուսաստանի առաջարկները ընդհանուր զեծերով էր ներկայացնում՝ նրա գործակից Ռակովսկին ժողովից դուրս կապիտալիստներին և մամուլի ներկայացուցիչներին կոնկրետ կերպով էր պարզում այն հսկայական օգուտները, որ կարող են քաղել Եւրոպացիները շահագործելով Ռուսաստանի ընտանեւ հարստութիւնները և ուսւ աշխատանքութիւնը: Նա հրատարակել էր մի քակալական ցանկի գնահատման արդիւնագրական և երկրագործական կոնսոխիտներին, որի ստիժի արտասահմանեան ուսւ մասնը իրաւամբ հաւար էր գցել, թէ Ճինովայում Ռուսաստանը մեծաքանակ և մանրաքանակ վաճառքի է հանւած...

Միևնույն տեսարանը մենք գտնում ենք մի քանի ամիս անց և Հաագի Խորհրդածողում, այն տարբերութեամբ միայն, իր Չիչերինիի և Ռակովսկիի փոխարէն այս անգամ՝ Լիտվինով և Հանդէս զալիս Ռուսաստանի ներկայացուցիչ դերում: Լիտվինովին այնքան Խորհրդածողովի նիստերը չէին

\*) « Der Kampf in Genua ». Verlag der Kommunistischen Internationale 1922 Hamburg, էջ 4-5

\*\*\*) Ibid. եր. 10

զբաղեցնում, որքան այն «մասնաւոր» տեսակցութիւնները, որ նա իր հիւրանոցում ունենում էր եւրոպական ու ամերիկեան կապիտալիստների և բանկերների հետ:

Եթէ այդ տեսակցութիւնները ջջափելի արդիւնք չտուն Ռուսաստանի տնտեսական վերաշինութեան տեսակէտից՝ յամենայն դէպս ունեցան այն արդիւնքը, որ բուշուիներիին վերջնականապէս պարզեցին, թէ ինչ է պահանջում իրենցից միջազգային կապիտալը և թէ ինչ գնով իրենք կորող են շահել նրա գործակցութիւնը:

Այս մասին հետեւեալ ուշադրաւ հազորդագրութիւնն է անում Ռակովսկայի երկրագործութեան կոմիտարը մի զեկուցման մէջ, որ ներկայացուած է Ռակովսկայի Երկրորդ Երկրագործական Համագումարին 1923 թ.ի Դեկտեմբերին:

« Միջազգային կապիտալի հետ խորհրդային իշխանութեան վարած քանակցութիւնները պէտք է համոզելի երանց, « որոնք իրենց յուր զբել են արեւմտեան-եւրոպական կապիտալի վրայ, որ վերջինիս գործօն մասնակցութիւնը հանրապետութեան տնտեսութիւնը վերականգնելու խնդրում, « կապած է Հոկտեմբերեան յեղափոխութեան հիմնական եւ առնումները վերացնելու հետ: Այդ կապիտալի պահանջն է, որ ազգայնացուած խոշոր ձառարարութեանը տրւի օտաւ բաւաններին, որ Հողի սեփականատիրութիւնը վերականգնի « և որ խորհրդային հանրապետութիւնը կորցնի իր տնտեսական, որպէս նաև քաղաքական անկախութիւնը: »

Գամմուելիովի լիակատար անձնատուութիւնը նշանակող այս պահանջը պահ մի ամենապատեհապաշտ բուշուիներին էլ ցնցեց, նրանք բարձրագոյ յայտարարեցին, թէ խորհրդային իշխանութիւնը կապիտալիստական Գանուս չի գնայ, այլ սեփական միջոցներով Ռուսաստանի տնտեսական վերաշինութեան գործը առաջ կը տանի Եւրոպեան Գերմանիայի, Իտալիայի, Անգլիայի և ուրիշ մի շարք պետութիւնների կողմից այդ իշխանութեան իրաւական ձանաղումը միջազգային նորմալ յարաբերութիւնների հեռանկարներն էր բացել բուշուիների առաջ նրանք որդեցին մի կողմ թողնել արդիւնաբերական կապիտալիստներին և միջազգային փոխառութեան հետապնդի՝ իրենց տնտեսական գործառնութիւնների համար անհրաժեշտ դրամը ձեռք բերելու նպատակով:

Սակայն այստեղ նազգ հիասթափութիւն չէր սպասում նրանց, քան արդիւնաբերական կոնսոխիտների քաղաքականութեան մէջ: Ինչ դուս նրանք բողոքեցին՝ փակուած դաս իրենց առաջ: Նրանց բոլոր դիմումներին բուրժուական պետութիւններն ու նրանց թիկունքին կանխած դրամաւերերը ամենուրեք միևնույն պատասխան էին տալիս. — Իսկ ձանաղեցէք Ռուսաստանի հին պարտքերը, որոնց շնչելը դուք Հոկտեմբերեան յեղաշրջման խորհրդային եւ առնումներից մէկն էք յայտարարել, և ապա՝ երաշխիք տւէք, որ փոխ արած դրամը կը վերադարձնէք:

Ի դուր էին բուշուիները ամէն տեղ և ամէն առթիւ կուրծք ձեծում, թէ հրեշաւոր անորոշութիւն է իրենց պատասխանատու համարել այն պարտքերի համար, որ արեւն են ստեղծ քարական կաւաճարութիւնները: Ի դուր էին նրանց այդ պարտքերին հակադրում հաստատման պահանջն այն թեաներին, որ պատճառել են Ռուսաստանի եւրոպական իււ-

պերիպլեոսները նեցուկ հանդիսանալով Գնեիկիներ, Կոլլակներ, Վրանգելիներ և նրանց համախոհներին՝ հակաբոլշևիկ պայքարների ժամանակ և վերջապես ի զուր էր Ռուսաստանի պատերազմաբարձր ձեռնարկում հաւաստիացնում ամենքին, թէ « Բորչրպային իշխանութիւնը... իր ստանձնած պարտաւորութիւնները միշտ կատարել է և կատարատ է առաջ շիկայում էլ կատարելու, և թէ նրա աւանդ իրական « երաշխիքը նոյնքան հիմնադր է, որքան և որ և է ինքն « երկրան պետութեան երաշխիքը: »)

Կրկնում ենք, ի զուր էր այս ամէնը. որովհետեւ կապիտալը գիտէր, թէ ինքը ինչ էր պահանջում և թէ ինչ էին հրամայում իր պահանջածի փոխարէն: Նա մնաց անդրազեկ իր բացասական դիրքի վրայ՝ ըստ երեւոյթի տարակուս չունենալով, որ բոլշևիկները վաղ թէ ուշ պիտի գան չքոյրու իր առաջ:

Ս. Նրանք եկան:

Վերջին երկու տարում տնտեսական տագնապը Ռուսաստանում նորից սուր շարժեր էր առել: Գրեզդիոթիւնը 21 թի սովի աղէտից դեռ չկազդուրած՝ չէր կարողանում կառավարութեանը տալ այնքան հացահատիկ, որ անհրաժեշտ էր արտաշահել պետութեան առեւտրական հաշիւէլիւր կանոնադրու համար: Արդիւնազորում թիւեր կրիտի քայլերով էր առաջ գնում և միտն պետական օժանդակութեամբ իր աղբարիկ գոյութիւնը պահպանում: Նրա պարտքը դրամատներին 1923 Հոկտեմբերին հասնում էր 162 միլիոնի, իսկ 1924 Հոկտեմբերին՝ 400 միլիոնի: 1925 թիւն նախատեսուում է այդ պարտքի յաւելումը 280 միլիոնով: Այսքան պարտքեր անելով հանդերձ՝ արդիւնաբերութիւնը չէր կարողանում վճարել սոցիալական պետական հարկերը, և անցից տարակ վերջերին 60 միլիոնից աւելի հարկային պարտք էր կուտակել: Նրա վրայ (էկոնոմիշխակայա ժիզն 1924 թ. № 351) Աւելի չու վիճակի մէջ չէր առևտուրը: Գործակցական Ընկերութիւնները միայն մնաւով էին փակում իրենց հաշիւները, իսկ մասնաւոր առևտրականները բանկային վարկ չունենալով և չկարողանալով մրցիլ արտօսեալ պայմաններում աշխատող գործակցական ընկերութիւնների հետ՝ հետզհետէ ձեռնթափ էին լինում առևտրից: Վերջապէս անմիջեմ կացութեան մէջ էր և պետական ելեւմուտքը: 1925 թիւ նոյնաշիւր միայն ֆիկթիւ միջոցներով է հաւասարակշռւած: Նրա բացը քոչելու համար կառավարութիւնը դրած է դրամաների քանակն աւելցնելու անհրաժեշտութեան առաջ, որ իր հերթին պիտի ազդի բոլոր սակի վրայ:

Այս տնտեսական տագնապը անցեալ տարակ վերջերին անսովոր շարժերով բարձրացրել ընդհանուր դժգոհութեան ալիքը Ռուսաստանում: Ենթաման առաջապահն այս անգամ գրեզդիներ էր, որին այլևս ոչ կարելի էր դեմքի հողի խտտումով, ինչպէս 1917 թիւն, և ոչ էլ վախցնել կալաձատերերի ուրականով, ինչպէս 1919-1920-ին: Նա ոչ այնպէս անօթի էր, որ իր օրական ապրուստի հոգիբոց դուրս քան կարողանար տեսնել, ոչ էլ այնպէս կուշտ, որ զոհ լինէր իր կացութիւնից:

Գրեզդիութեան խոժոռ հայեացքին սարսափած բոլշևի-

ւիկները մի կողմից շտապեցին մի շարք անմիջական դիջուձներով սիրաշահել նրան, իսկ միւս կողմից ձեռք ու ոտք ընկան դրամ ձեռք բերելու՝ երկրի տնտեսական վիճակը բարելաւելու համար: Սրա համար նրանց այս տարակ սկզբին նորից առաջ քաշեցին արտաքին փոխառութեան և արդիւնաբերական կոնսուլտանտների խնդիրները:

Առաջինը դեռ ևս նախապատրաստական վիճակի մէջ է: Նրա ուղին հարթելու համար բոլշևիկները, ոտքի տակ տալով « Հոկտեմբերեան կարեւոր նաճուձնորդից մէկը » սկզբունքով ընդունել են արդէն ցարական կառավարութիւնների պարտքը վճարելու պահանջը և այժմ Լեոնովում՝ ու Փարիզում բանկացութիւնների մէջ են վճարման ձեւերն ու պայմանները ճշտելու համար:

Երկրորդը մի զգայի շարժով արդէն լուծւած է: Բոլշևիկները, որ անցած հինգ տարակ ընթացքում չէին կարողանում, ճնայած իրենց ջանքերին, որ և է լուրջ կոնսուլտանտ փաթաթել եւրոպական և ամերիկեան կապիտալիստների զիւլին՝ այս տարակ Մախիւն յանկարծ յաջողեցան հաւանութեան բերել կապիտալիստական մի շարք խումբերի և նրանց հետ համաձայնագիր պատգարկ բազմաթիւ լուրջ տնտեսական ձեռնարկների շուրջը: Այսպէս օրինակ կազմւած և վերակազմւած են մի շարք բաժնետիրական ընկերութիւններ անգլիական, ամերիկեան, գերմանական և ճապոնական կապիտալի մասնակցութեամբ, որոնց իրաւունք է տրւած ջահագործելու Լէնայի, Ալտայի, Ուրալսկի, Հեռաւոր Արեւելքի և Գովկասի հանքային, անտառային և ջրային հարստութիւնները: Այդ ընկերութիւնների վերադարձն են իրենց նախկին, մի ժամանակ ազգայնացւած, գործարանները և տրւած բազմաթիւ նորերը: Նրանցից մի քանիսը երկաթուղային և շրջանաւային հազարակցութիւններ հաստատելու իրաւունք և պարտականութիւն են ստանձնել ևս:

Նաք է ծագում. ինչով պէտք է բացատրել այս յեղափարծ փոփոխութիւնը միջազգային կապիտալի վերաբերմունքի մէջ ինչպէս հասկանալ, որ այդ կապիտալը այսքան տարիներ անհեյտ յամառութեամբ բոլշևիկեան բոլոր ջրակէրներն ու կոչերը անպատասխան թողնելուց յետոյ՝ յանկարծ բարեհաճում է հարիւրաւոր միլիոններ յարժուութեամբ հարստութիւններ ի սպաս դնել բոլշևիկների «կոմմունիստական վերաշինութեան» գործին:

Այս հարցի պատասխանը մնաւոր միայն տալիս է Գ. Պետասովիցը, որ կոնսուլտանտների պայմանագրեր ստորագրողն է խորհրդային իշխանութեան կողմից:

« Մենք ստիպւած էինք — ստում է նա — շատ լուրջ « և էական դիջուձների գնալ և չեմ կարող չտակել, որ պայ- « մանագրութեան նախագծի կէտերը մեզ համար ծանր են... « Մենք ստիպւած էինք աչպիպի վիճուձներ անել, որպիսիք « մենք մինչեւ հիմա «կոնսուլտանտների պայմանագրութեանց « մէջդեռ չէինք արել («Գրավազ» 12 Մայիս 1925):

Այդ ծանր դիջուձների շարքում են օրինակ այն, որ ազգայնացրւած ձեռնարկները վերադարձում են իրենց տէրերին. որ կոնսուլտանտ ստացած ընկերութիւնները ենթակայ չեն խորհրդային իշխանութեան զատարաններին, որ նրանց ոչ միայն ազատ են տեղական մի շարք հարկերից, այլ և

\* Ibid. է. 15.

մաքսային ազատութիւններ ունին որոշ կարգի ապրանքների ներմուծման և արտածման համար, որ նրանք իրաւունք ունին Ռուսաստանի Հարստութիւնները շահագործելու նպատակով արտասահմանից բանւորներ բերել են:

Այս դիշուսները շատ լուրջ են, անկասկած: նրանք իրենց ամբողջութեան մէջ խորհրդային երկրները մեծապէս անկասկածաբար փշուրում են, ինչ որ ունեւոր ծաճկաստանը կապիտալիզմի շրջանների ժամանակ, կամ ինչ որ ունին Բիւսաստանն ու Պարսկաստանը մինչև հիւստ — մեծ հրապուր են ներկայացնում միջազգային կապիտալի համար: Բայց նրանք, ինչպէս ասացինք, մասաւոր միայն կարող են բացատրել վերջինիս մուտքը դէպի խորհրդային երկրները:

Ռուս բացատրութիւնը պէտք է որոնել այն հսկայական փոփոխութեան մէջ, որ կրեցին խորհրդային Ռուսաստանի հիմնական օրէնքները խորհրդերի վերջին գումարման միջոցին: Այդ փոփոխութիւնների մասին դեռ այս տարւայ ապրիլին ազգայրարեց Էկոնոմիստիկայա ժողով թերթը նպատակ ունենալով նախապատրաստել կոմմունիստական շրջանակները գալիք հարւածի համար: Սակայն ոչ ոք չէր ենթադրում այն ժամանակ թէ հարւածն այդքան ծանր, այդքան հիմնական պիտի լինէր: Գրչի մի շարքումով Սոցիալիստական Հանրապետութեան սահմանադրութիւնից զուր հանեցին այն բոլոր կէտերը, որոնք դեմ: միջազգային կապիտալիզմին մինչև օրս ասանմեր էր կրճատեցում: Այլևս Խորհրդային Ռուսաստանի սահմանադրութեան մէջ զուց չէք գտնի հողերի հանայնացում, բանկերի ազգայնացում, ընդհանուր պարտադիր աշխատանք, բանտրական հակալիտ արդիւնաբերութեան վրայ, աշխատուորների սպառազինում և թուրքուպիայի գիւնարապիտիւն, ցարական կառավարութիւնների կնիւտ փոխառութիւնների ոչնչացում ևն. ևն. ուրիշ խոսքով նրա միջոց զուրս են նստած այն կարեւոր սկզբունքները, որոնք Լէնինի կազմած «Աշխատուորների զեկարատիստի» հիմքն են կազմում, և յանուն որոնց բոլշեւիկները 1917-ին առաջնորդում էին իրենց հաստատող ժողովրդական զանգաւաններին դէպի Հոկտեմբերեան բարեկառնութիւնը:..

Միջազգային կապիտալիզմի պահանջը բոլշեւիկներին ահա այս էր: Պէտք է խորհրդային իշխանութիւնը հրամարտի կոմմունիստական այն սկզբունքներից, որոնք զործնական արժէք կարող են ունենալ սոցիալիստական շինարարութեան համար: Նա պէտք է իրաւունք չունենայ յանուն այդ սկզբունքների արդիւնք հանդիսանալ կապիտալիստներին՝ Ռուսաստանի Հարստութիւնները և ուրա աշխատուորութիւնը կապիտալիստներն շահագործելու: Եւ որովհետև խորհրդային պետութեան սահմանադրութիւնը օրինական ներթափանցում է տալիս այդ սկզբունքներին՝ ապա պէտք է այդ սահմանադրութիւնը իր համապատասխան մասերով վերանայ մէջ տեղից: Ահա այդ պահանջի իմաստը:

Իրաւած կոմմունիստական տնտեսութեան աղայամիտ փորձերից, անկարող սեփական միջոցներով Ռուսաստանի տնտեսական կենսը բարեկարգելու և արտաքին տնտեսական անընդհանրութեան հողի վրայ ուճաջող ժողովրդական ցաւաւից՝ բոլշեւիկները հրա կամակատարութեամբ ենթարկեցին

միջազգային կապիտալի հրամայական պահանջին՝ յոյս ունենալով նրա օժանդակութեամբ ամբապնդել իրենց իշխանութիւնը — այն իշխանութիւնը, որը ձեռք բերելու և պահելու համար նրանք մինչ օրս այնքան սրբութիւններ ստանաւան են:

Այդ յոյսերն անհիմն չեն — ինչ չափով որ նրանք միջազգային կապիտալի վերաբերմունքից են կախած: Վերջինիս համար ոչ մի իշխանութիւն Ռուսաստանում չի կարող աւելի ցանկալի լինել, քան բոլշեւիկները իշխանութիւնը, որովհետեւ ոչ ոք չի տայ նրան այդ դժբախտ երկիրը սանձարձակ շահագործելու այն իրաւունքները, ինչ որ տալիս են և պիտի տան բոլշեւիկները: Դրա համար էլ անհասանական չէ, որ նա ուղղակի և անուղղակի միջոցներով աշխատե հաստատուն պահել Ռուսաստանում խորհրդային բեժմիւր, ի հարկէ, աստիճանաբար նրա մէջ մտցնելով այն փոփոխութիւնները, որոնք ձեռնտու կլինին իր շահերին:

Բայց ինչ կտան ուրա աշխատուորութիւնը այս անարգ գեշեճի մասին: Ինչպէս կը վերաբերէ նա դէպի այն մարդիկ, որոնք իրենց իշխանութիւնը յարատեւելու համար Ռուսաստանը ենտում են կապիտալիզմի ճիւղները: Արդեօք նա հրա — Հնազանդօրէն իր սոքերին և թւերին կանխ բողշեւիկ-կապիտալիստական համաձայնութեամբ դարբնած շրջանները, թէ իրեն յատուկ Ելիս Մուրմեդիան հոժկու ցընցումով վայր կենտր իր վրայից թէ այդ շրջանները և թէ նրա դարբնողներին:

Կարծում ենք մարզարե չպէտք է լինել այս հարցերի պատասխանը զուշակելու համար:

Ա. ՋՄԱԼԵՆԵՆ

## Ա. Ը. ԻՆՏԵՐՆԱՍԻՈՆԱԼԻ ՀԻՄՆԱԳԻՐ ԺՈՂՈՎԸ

Դրոշակի նախորդ համարում ժամանակագրական կարգով առաջ բերինք այն գլխաւոր դէպքերը, որոնք տեղի են ունեցել Ընկերվարական Ինտերնատիոնալի ծոցում համաշխարհային պատերազմից սկսած մինչև Աշխատուորական Ընկերվար Ինտերնատիոնալի վերակազմելը համարում: Մարտի 22-ին համազումարի առթիւ, որ պիտի բացէ Օդեսոսի 22-ին, անհրաժեշտ ենք համարում համառօտակի ներկայացնել մեր ընթերցողներին համարագում կատարած աշխատանքը, մասնաւոր որ նրա մասին մեր մամուլի մէջ յոյս տեսած տեղեկութիւնները կցկուտը և պատահական բնաւորութիւն են կրում:

Համարողի համազումարը բացւեց 1923 Մայիսի 9-ին և տեւեց վեց օր: Պատգամաւորների ցանկից երեւում է, որ համազումարին մասնակցում էին 32 տարբեր երկրների պատկանող 39 կուսակցութիւն, 442 վճռական և 177 խորհրդակցական ձայնով:

Կազմակերպիչ կոմիտէն նկատի ունենալով համաշխարհային պատերազմից ի վեր ընկերվարական կազմակերպութիւնների մէջ առաջացած բազմապիսի սկզբունքային և տակ-

տրիական տարածայնութիւնները՝ մի շարք պայմաններ էր դրել կուսակցութիւնների առջև, համագումարին մասնակցելու համար: Այդ պայմաններն էին.

1. Ընդունել կապիտալիստական կարգերի վերացումը իբրև նպատակ և դասակարգային պայքարը իբրև միջոց՝ աշխատաւոր դասակարգի ուղատարութեան համար:

2. Ամստերտամի Արհեստակցական Ինտերնասիոնալը նկատել իբրև անհրաժեշտ հաստատութիւն՝ աշխատաւորութեան դասակարգային պայքարը յաշտութեամբ վարելու տեսակետից:

3. Իսպաղութեան պահպանման խնդրում ղեկավարել այն բանաձևով, որ մշակել է Հասպի համաշխարհային խաղաղութեան համագումարը:(1922 թ.):

4. Ինտերնասիոնալը նկատել իբրև մի գործիչ, որ անհրաժեշտ է ոչ միայն խաղաղութեան, այլ և պատերազմի պահին առաջացած խնդիրների լուծման համար:

5. Ընկերվար Ինտերնասիոնալի վերակազմութիւնից յետոյ չպատկանել նրանից դուրս գտնուող որ և է միջազգային քաղաքական միութեան:

Այս պայմանները բաւարար չեն, ի հարկէ, Ինտերնասիոնալը միաձոյ կազմակերպութիւն դարձնելու համար: Սակայն կողմակերպիչ կոմիտէն համոզուած է, որ այդ միաձոյութիւնը նախնական պայմանադրութիւններով չպէտք է ստեղծւի, ինչպէս եկեակրում և բուլճերիկների թիւած ճորտող Ինտերնասիոնալը, այլ կուսակցութիւնների տակակն գործակցութեամբ: Այդ գործակցութեան միջոցին է, որ նրանք իրար յարմարելու և իրար յղկելով պիտի ստեղծեն ժողով և կամբի այն միօրինակութիւնը, որ անհրաժեշտ է նրանց միութեանը — Ինտերնասիոնալը մի կուս. կազմակերպութիւն գարձնելու, տեսակետից:

Համագումարի օրակարգը կազմած է հետեւեալ կէտերից.

1. Ինկերիայիպսական խաղաղութիւնը եւ աշխատաւոր դասակարգի անեղիչը.

2. Միջազգային պայսար միջազգային տեսկիտնի (յեւաշրջութիւն) դեմ.

3. Ընկերվար կուսակցութեան կասարելի՛ք ֆայնը 8 ժամեայ օրւայ եւ միջազգային ընկերային բարենորոգումների համար:

4. Միջազգային աշխատաւորութեան կազմակերպութիւնը:

Օրակարգի կէտերը և նրանց մասին ստացած բազմաթիւ առաջարկութիւնները գանազան կուսակցութիւնների կողմից հանգամանօրէն քննելու համար համագումարը վերածուեց չորս յանձնաժողովների: 2. Յ. Իաշնակցութեան կողմից առաջին յանձնաժողովին մասնակցում էր ընկ. Վարանդեան, երկրորդին և չորրորդին՝ ընկ. Զամախեան, իսկ երրորդին՝ ընկ. Համբարձումեան:

Օրակարգի առաջին կէտի մասին Համագումարը Յանձնաժողովի առաջարկով ընդունում է մի ընդարձակ բանաձև, քաղկացած հինգ կէտից, որի մէջ նախ և առաջ վեր են հանաւած այն տեսեական քաղքայումը, քաղաքական անկաւուշնութիւնը, աշխարհակալական ախորձակների սանձարձակութիւնը

և նոր պատերազմների վտանգները, որոնց մէջ ընկել է Եւրոպան համաշխարհային պատերազմի և բուճարտեսայ խաղաղութեան դաշնագրերի հետեւանքով. ապա ճշուում են աշխատաւոր դասակարգի դիրքն ու անելիքը Հանդէպ այն քաղաքական խնդիրների, որոնք ծագում են տեղեկած կացութիւնից: Ըստ բանաձևի՝ աշխատաւոր դասակարգը ուժեղացած առաւանակ է միջին եւրոպական յերափութութիւններով և թեւաւորած անգլիական աշխատաւորութեան յարթական վերելքով՝ աշխարհակալ ձգտումներին «հակադրում է իր քաղաքականութեանը — քաղաքականութիւն խաղաղութեան, ժողովրդների « ազատութեան և ընկերվարութեան», որը միայն կարող է « համաշխարհային խաղաղութիւնը վերջնականապէս ապահովել:

Համաձայն այս քաղաքականութեան աշխատաւոր դասակարգը և նրա կամքը ներկայացնող ընկերվարական կուսակցութիւնները պարտաւոր են, որ սեղ առիթը կը ներկայանայ. —

1. Պայքարիլ ազգային և կրօնական փոքրամասնութիւնները բուճապատութեան ենթարկելու դէմ՝ նրանց ինքնավարութիւնը պահանջելով,

2. Ընդլիմանալ նաձողական գաղութային քաղաքականութեանը պահանջելով գաղութային ժողովուրդների համար ինքնավարութիւն կամ այդ ինքնավարութիւնը նախապարտաւոր քաղաքականութիւն,

3. Պահանջել ամենուրեք տեսեական հովանաւորող քաղաքականութեան վերացումը և ազատ փոխանակութեան հաստատումը.

4. Պահանջել բոլոր ոչ միայն պարտած, այլ և յարթական պետութիւնների լիակատար ղէնընկեցութիւնը,

5. Պայքարել ազգամական զինակցութիւնների և գաղտնի դաշնագրերի դէմ,

6. Պնդել և Ազգերի Լիգան բոլոր ժողովրդներին՝ ընդունելով իր ծոցը և դեմոկրատիկ սկզբունքների հիման վրայ բարեփոխելով իր կազմակերպութիւնը՝ դառնայ համամարդկային խաղաղութեան գործօն ազգակ,

7. Գուճ միջի պատերազմի վտանգի դէմ՝ համաձայն համաշխարհային խաղաղութեան Հասպի համագումարի ընդունած բանաձևի: Այս կուս. համար համախմբել աշխատաւորական բոլոր գանգաւաններին և պարլամենտներում մերժել նաձողական նպատակներ հետապնդող պատերազմների համար պահանջում գինւորական վարկերը:

8. Ընդունելով հանդերձ, որ Գերմանիայի բարոյական պարաքն է վճարել վերաշինական ծախսերը ֆրանսում կողմերին ինչպէս այդ մտքով քանիցս արտայայտել են Գերմանիայի ընկերվար և արհեստակցական կազմակերպութիւնները, որահանջել, որ նախ այդ ծախսերի գումարը համաձայն իրական տեսլիների միւնզկամ ընդմիջող ճշուտի և ապա՝ որ այս խընդիրը բուճի ուժով կարգակերտ (Բուրի գրաւուճ)՝ քաղաքականութեանը վերջ տրի.

9. Պահանջել, որ Վրաստանի և Հայաստանի անկախութիւնը վերահաստատուի.

10. Պահանջել բոլոր ազգերի համար ինքնորոշման իրաւունք և հետամուտ լինել շտկելու պետութիւնների այն սահմանները, որոնք գծած են այդ իրաւունքը ոտնահարելով:

Այս բանաձևը համագումարին ներկայացնելիս առաջին յանձնաժողովի նախագահ Ընկ. Հիւսամանը (Բեյշիկա) յայտարարեց, որ նրա բոլոր կետերը անցել են համարեա առանց վիճաբանութիւնների բացի ազգային հարցին վերաբերեալ կետերից: Խնդիրն այն է, որ եթէ համաշխարհային պատերազմից առաջ մի երկու կարևոր ազգային հարց կար (Լեհական, Փինանական, հայկական են) այժմ, շնորհիւ հակաժողովրդական սահմանադրւումների, դրանց թիւը եռապատկել, քառապատկել է: Այսպէս օրինակ՝ ազգային հարց ունին ուկրաինացիք, որոնք ուզում են անջատուել Ռուսաստանից: Չիստարվաքիզի գերմանացիք, որոնք ուզում են միանալ մասամբ Գերմանիային և մասամբ Աւստրիային: Ռուսմանիոյ շուեկարները, որ ուզում են վերազաւանդ մայր երկրի դիրքը: Խուպակեան Տիրուլի գերմանացիք, որ ուզում են նորից միանալ Աւստրիային ևն: Երբ, մի շարք կուսակցութիւններ պահանջում էին յանձնաժողովից, որ իրենց շահագրգռող ազգային հարցերը կոնկրետ ձևակերպութեամբ ներկայացնեն համագումարին: Սակայն, աւելացնում է ընկ. զեկուցանողը, յանձնաժողովը հնարաւոր համարեց միայն հայկական և վրացական հարցերը այդպիսի ձևակերպութեամբ բերել համագումարին, որովհետեւ այդ հարցերը անվիճելի են: Մինչդեռ միւս հարցերը դեռ ուսումնասիրութեան կարօտ են:

Բանաձևի մէջ Հայաստանին վերաբերեալ՝ կէտը հետեւեալ խմբագրութիւնն ունի.

« Հանազումարը բողոքում է այն արիւնդուց « բռնապետութեան դիմ, որին ենթարկւած է Հայաստանը « Տանլիասանի եւ Ռուսաստանի կողմից եւ պահանջում « է հայ ժողովրդի ինքնորոշման խառնելը:

Ստորև կը տեսնենք, որ «ինքնորոշման իրաւունք» դարձուացը այստեղ անկախութեան իմաստով է գործածուած:

Երկրորդ յանձնաժողովի մէջ կարծիքների շատ աւելի մեծ տարբերութիւն կար, քան առաջինի: Ընկ. Օտուս Բաուէրը պատրաստել էր բանաձևի մի ընդարձակ նախագիծ, որի մէջ կոնկրետ Հարցադրութեամբ ներկայացւած էին այն բոլոր երեւոյթները, որոնք կարող են որակուել իրրեւ համաշխարհային թշակոխոնի արտայայտութիւններ: Սակայն չնայած իր ընդարձակութեանը բանաձևը շատ քիչ բան էր ստում՝ բուշելիովի դէմ, որ համաշխարհային թշակոխոնի ամենախոշոր երեւոյթներից մէկն է:

Այս վերաբերմունքից դժգոհ՝ ընկ. Աբրամովիչը (ռուս. յ.) իր կողմից առաջարկում է մի երկրորդ բանաձևի նախագիծ, նոյնպէս շատ ընդարձակ, որ բուռն արտայայտութիւններով վեր է հանում բուշելիովի հակադեմոկրատիական հոգին և նրա հակայական դերը համաշխարհային թշակոխոնի մէջ:

Յանձնաժողովը քննութեան հիւնք է դարձնում ընկ. Բաուէրի բանաձևը: Այս առթիւ Ն. Յ. Դաշնակցութեան կողմից առաջարկում է հետեւեալ լրացումը.

« Համագումարը վրդովմունքով տեղեկանում է, որ հաւ յանձնեցները հայերի դէմ դեռ շարունակում են Տաճ. « կատառում, որ թուրք ազգայնականները, միապազազ « թիւրքական պետութիւն ստեղծելու համար, 1915-1916-ի « մեծ կոտորածներից ազատուած հայերին Հայաստանից և Անա. « տօիայից զանգաճօրէն և բռնի կերպով դուրս են քշում

« դէպի արտասահման և նրանց օջաղները աւերի մատում: « Բոլոր աշխատաւորական կուսակցութիւնները պարտաւոր « են, իրենց պարլամենտական Ֆրակսիոններին և մամուլի մի- « ջնցով, այս ամենադժման թշակոխոնի դէմ դուրս գալ և « պահանջել, որ աշխարհակալական պատերազմից այնքան « ծանր տուժած այս ժողովրդին հնարաւորութեան տրել իր « հայրենիքում անկախ և խաղաղ ապրելու:

Այս լրացումը ընդունում է յանձնաժողովի կողմից և կցում ընկ. Բաուէրի բանաձևին:

Սակայն վերջին պահին անգլիացիք հանդէս են գալիս մի գրաւոր առաջարկով, որի մէջ նրանք իրենց համամտութիւնը յայտնելով ընկ. Բաուէրի բանաձևի սկզբունքներին՝ աւարկում են այն բանի դէմ, որ նա համաշխարհային թշակոխոնի հետ առընչութիւն ձանցող մասնաւոր երեւոյթներին, որոնք առանձին ուսումնասիրութեան կարևոր ունին համապատասխան ձեւակերպութեան ստանալու համար՝ գործնական քաղաքական պահանջի հանգամանք է թալիս նրանց կարծիքով բանաձևը միայն սկզբունքային ուղղորդ պետք է տայ կուսակցութիւններին, թողնելով, որ վերջիններս համաձայն արւած սկզբունքների քննեն և լուծեն թշակոխոնի հետ կապուած գործնական խնդիրները:

Այս տեսակէտը հասնութիւն է գտնում ամերիկեան և սկանդինաւեան պատգամաւորների կողմից: Յանձնաժողովը որոշում է համաձայն անգլիացիների առաջարկի վերամշակել ընկ. Բաուէրի բանաձևը՝ դուրս հանելով նրա միջից բոլոր կոնկրետ հարցերը, որոնց թոււմ է մեր հարցը: Միւս կողմից, հակառակ անգլիացիների ընդունելով, որ բուշելիովի կարևոր դեր է կատարում համաշխարհային թշակոխոնի խնդրում և չի կարելի լուծութեամբ անցնել նրա դէմ պայքարող ուսու ընկերների պահանջի միտքի՝ յանձնարարում է վերջիններիս մի նոր՝ աւելի՝ կրճատ բանաձևի նախագիծ կազմել:

Յանձնախմբի կողմից այս բանաձևները ներկայացնում են համագումարին ընկ. Բաուէր և ընկ. Աբրամովիչ: Առաջինը ընդունում է միաձայնութեամբ, իսկ երկրորդը ամենքի ձայնով բացի անգլիացիներից, որոնք ձեռնպահ են մտնում:

Ըստ առաջին բանաձևի՝ համագումարը նախ և առաջ դատապարտում է այն բանութեան մեթոտները, որ կիրառում էր բուրժուազիս աշխատաւորութեան յաղթական առաջխաղացութեանը դիմապահուելու համար: Այդ մեթոտն արտայայտութիւններն են Գերմանիայի դէմ Դաշնակցիների կողմից յաճախակի գործադուրգ ձեռնարկները, «սպիտակ տեւօրը Հուլիսարիւտում», Փաշխտական դիկտատուրան Իտալիայում, հայկական հարձանքները Տաճկաստանում», ազգային փոքրամասնութիւնների իրաւարկումը բազմաթիւ երկրներում ևն, որոնք ոչ միայն թշակոխոն են առաջացնում՝ այն երկրում, ուր գործադրում է բռնութիւնը, այլ և թոււաւորում են նրա սահմաններից դուրս գտնուող ժողովրդների քաղաքական կեանքը:

Ոչ նազ վճռակաւութեամբ համագումարը «գատապարտում է մոլայայ կառավարութեան կողմից շարունակուած « բրիտանական մեթոտներ, ինչպէս և ժողովրդապետական « հիմնական իրաւունքների վերացումը, որոնք փտաղ են « ներկայացնում ոչ միայն ուսու աշխատաւորների, այլ և

« միջազգային աշխատաւորութեան ամենակարեւոր շահերի « համար»

Այս ընդհանրութեան հանդէպ «համազումարը կոչ է անում « բոլոր երկրների աշխատաւորութեանը՝ ժողովի իր բոլոր « ուժերը միջազգային բեակսիոնի դէմ, յետ մղել կապիտա- « լիզմի բռնակալ յարձակողականը, վերահաստատել ամբողջ « աշխարհի վրայ ժողովրդապետութիւնը և այսպիսով ստեղծել « այն պայմանները, որոնք ապահովում են ընկերվարութեան « յաղթանակը:

Այս ընդհանուր տեսակետների շրջանակում մնալով՝ ըն- կերվարական կուսակցութիւնները համաձայն բանաձեւի պար- տաւոր են.—

1. Հսկել իրենց երկրների արտաքին քաղաքականու- թեան վրայ և թոյլ չտալ որ վերջինս դրսի երկրներում քա- ղաքական և ընկերային իեակսիոնի յենարան հանդիսանայ:

2. Պահանջել քաղաքական փոխտականների համար սակարկութեան իրաւունք և բանտարկւած ընկերվարա- կանների համար պալատութիւն:

3. Ընդդիմանալ ամէն տեսակի արտաքին միջամու- թիւնների, քոյրկանների և յոյկոնքների: Ընդդիմանալ մասաւ- ւորապէս այդ միջամուտիւններին, որ կապիտալիստական կառավարութիւններն են կիրաւում Ռուսաստանի դէմ, որով- հետեւ « նրանց զեկավարութեամբ կտատարող միջամուտիւնը « ոչ թէ աւտական յեղափոխութեան ներկայ փուլի սխալ- « ները կը վերացնի, այլ յեղափոխութիւնն ինքնին: Միան- « զամայն անկարող իսկական ժողովրդապետութիւն առաջա- « ցնելու՝ նա-կը հաստատէ միայն արեւուտշտ հակայդա- « փոխութեան տիրապետութիւնը, որ գործիք կը դառնայ « արեւմտեան իմպերիալիզմի ձեռքին՝ ուսւ ժողովուրդը շա- « հագործելու համար:

4. Վերոյիշեալ միջամուտեան վտանգը կանխելու հա- մար՝ հետամուտ լինել որ պետութիւնները իրաւապէս ճանաչ- շեն խորհրդային կառավարութիւնը և Ռուսաստանի հետ զինանախիտական ու առևտրական յարաբերութիւնները վերա- կանգնեն:

5. Պաշտպանել ազգային փոքրամասնութեանց շահերը:

6. Ընդդիմանալ ֆինանսական արտաքին կոնտրոլին, որ յաճախ միայն քոյրարկւած ձեւն է հանդիսանում արտաքին միջամուտեան, ինչպէս Աւստրիայի օրինակն է ցոյց տալիս: Միւս բանաձեւը նորից պնդելով, որ միջազգային աշխա- տաւորութիւնը պիտի ընդդիմանայ աշխարհակալ պետութիւն- ների փորձերին՝ Ռուսաստանի ներքին կենսքին միջամտելու կամ այնտեղ քաղաքացիական կռիւ առաջացնելու՝ պահան- ջում է խորհրդային իշխանութիւնից.—

1. Դադարեցնել ընկերվարականների դէմ ուղղւած անարդ հալածանքները և անմիջապէս ազատել քաղաքական բան- տարկեալներին:

2. Հրամարել կուսակցական դիկտատուրայից և վերա- հաստատել քաղաքացիական ազատութիւնները և ժողովրդա- պետական վարչութիւնը:

Միայն այս պայմաններով Ռուսաստանը կը դիտել իբրև յեղափոխութեան յենարան և ոչ թէ համաշխարհային բեակ- սիոնի օջախ:

Բանաձեւի վերջում համազումարը իր համակրանքն է յայտնում բոլշեւիկեան տէնօրի սոցիալիստ գոհերին և յանձ- նարարում ընկերվարական կուսակցութիւններին բարոյապէս և նիւթապէս օգնել նրանց:

Օրակարգի երրորդ կէտի մասին յանձնաժողովի առա- ջարկով համազումարն ընդունում է մի բանաձեւ, որով նա

1. Իր համամուտիւնն է յայտնում՝ Արհեստակցական Ինտերնասիոնալի ընկերային-քաղաքական գործունէութեանը և հրահանգում ընկերվար կուսակցութիւններին բոլոր ուժերով շջակցել այդ գործունէութեանը:

2. Դաստիարակութեան խօսք է ուղղում այն երկրների հասցէին, որոնք միջազգային խորհրդաժողովներում ստանձ- նած յանձնառութիւնները չեն կատարում, թէն այդ յանձնա- ռութիւնները աշխատաւորութեան նազազոյն պահանջներից դէնը չեն անցնում:

3. Պահանջում է աշխատաւորներից հակազդել կապի- տալիստների ձգտումներին՝ Աշխատաւոր Միջազգային Բիւրօն (Սզգերի Լիգայի կից) իր շահերի գործիք դարձնելու:

4. Իր վճռական կամքն է յայտնում պահանջել այն ընկերային նաճառները, որոնց աշխատաւոր դասակարգը պատերազմի միջոցին և նրանից յետոյ այնքան ծանր զոհո- ղութիւնների զեով տիրացել է:

Վերջապէս օրակարգի չորրորդ կէտի համար համազու- մարը որոշում է հաստատել կազմակերպական կանոնների այն նախագիծը, որ մշակել էր Համազումարի կազմակերպիչը Կոմիտէն:

Այս կանոնադրութեամբ Աշխատաւորական Ընկերվար Ինտերնասիոնալը իր կազմակերպական կեդրոնացումով միջին սեղան է բռնում Նախկին Երկրորդ և Կոմիտէնիստական կամ Երրորդ Ինտերնասիոնալների միջև: Նա՝ ոչ առաջինի պէս կուսակցութիւններին ազատ է ձգում կարելու միջազգային հարցներում ըստ իրենց հայեցողութեան վարելու՝ և ոչ էլ վերջինի պէս կուսակցութիւններին ներքին կենքի մանր-մուր խնդիրների կարգադրութիւնը կենդրոնացնում է կենդրոնում նստած Գործադիր Բիւրոյի ձեռքը: Այս կազմակերպական դիրքը ճշտող յօդուածները հետեւեալներն են.

§ 3 « Աշխատաւորական Ընկերվար Ինտերնասիոնալը « կենդանի իրականութիւն կարող է դառնալ միայն այն դէպ- « քում, երբ նրա որդումները բոլոր միջազգային հարցե- « ռում իր մասը կազմող ամէն մի կուսակցութեան համար « պարտադիր կը լինեն: Այս պատճառով միջազգային կազ- « մակերպութեան ամէն մի որոշում նշանակում է առանձին « երկրների կուսակցութեանց ինքնուրոյնութեան յօժարակամ « սահմանափակում:

§ 4. « Ա. Ը. Ինտերնասիոնալը ոչ միայն գործիք է « խաղաղութեան ժամանակի խնդիրների համար այլ և նոյն. « բան անհրաժեշտ գործիք՝ ամէն մի պատերազմի ժամանակ: Ազգերի միջև վեճեր ծագելու դէպքում «Ա. Ը. Ինտեր- նասիոնալը նրան միացած կուսակցութիւնների կողմից ճա- նաչւում է իբրև վերագոյն ստեան»:

Հիմնական դժբերով ահա այս է Ա. Ը. Ինտերնասիոնալի հիմնադիր ժողովի պատկերը:

Համարողի Համազումարից ի վեր Ինտերնասիոնալի Գոր-



ծաղիր Կոմիտէն Հինգ գումարում է ունեցել. 1923 թ. Մալխի նամարում, 1924 թ. Փետրարին Լիբանոսում, 1924 Յունիսին Վէննայում, 1924 Սեպտեմբերին Լոնդոնում, 1925 Յունուարին Բրիսէլում և 1925 Մայիսին Փարիզում:

Այս գումարումների մասին ժամանակին մանրամասնորէն հարցրապարւած է մեր մամուլին, ուստի աւելորդ ենք համարում անդրադառնալ նրանց կատարած աշխատանքներին:

Դուրսմանտաստիկ համար միայն առաջ ենք բերում այստեղ այն բանաձեւերը, որ Գործադիր Կոմիտէն զանազան ժամանակներում ընդունել է ինպատու մեր դատի:

**I ԲԱՆԱՁԵՒ**

Ընդունած Լիբանոսի գումարումին 1924 փետր. 17-ին.

Նկատելով որ դաշնակից պետութիւնները դրժեղով իրենց պաշտօնական յանձնառութիւնները Լօզանի Դաշնագրով Հայաստանն յանձնել են ֆեւսակական թիւքերին,

Որ մօտ մի միլիոն հայ փախսականներ, որ ազատել են 1915-ի կոտորածներից, դեռ մնում են օտար երկրներում դասապատուած խորին թշուառութեան եւ առանց կարելիութիւն ունենալով վերադառնալ իրենց օջախները:

Որ առաջիկային վիճարանութիւններ տեղի պիտի ունենան Մեծն Բրիտանիայի, Ֆրանսիայի եւ Իտալիայի պարլամենտներում Լօզանի դաշնագրի վաւերացման շուրջը,

Ա. Ը. Ինքեւնասիոնայի Գործադիր կոմիտէն հիմնելով Հանրապետի Հանագունարի բանաձեւի վրայ, յանձնարարում է ետէք երկրների պարլամենտական խմբակցութիւններին Լօզանի Դաշնագրի փնտրութեան ժամանակ պահանջել հայկական ազգային օջախի իրականացումը Տանկահայաստանում, օջախ որի անհրժեշտութիւնը ընդունւած է Ազգերի Լիգայի եւ հեկն իրենց պետութիւնների կողմից

**II ԲԱՆԱՁԵՒ**

Ընդունած Լիբանոսի գումարումին 1917 թ. Փետր. 17

Ա. Ը. Ինքեւնասիոնայի Գործադիր կոմիտէն հիմնելով Հայաստանի մասին Հանրապետի Հանագունարի հանած որոշման վրայ՝ պահանջում է, որ կառավարութիւնները խորհրդային Ռուսաստանի ճանաչման առթիւ ապահովեն հայ ժողովրդի անկախութեան իրաւունքը:

Ա. ԱՐԻՍԵԱՆ

**Վ Ի Պ Ա Կ**

Հ. Յ. Դաշնակցութեան ծրագրին մէջ երկու կարեւոր տպագրական վրիպակներ ապրիլի են:

Էջ 6 վերջին տողին մէջ՝ «նժմանաւորութեան» պիտի ըլլայ փոխանաւորութեան:

Էջ 16, տող 15 երրորդ պատկերի մը՝ պիտի ըլլայ մարդկութիւն մը:

Հ. Յ. Դ. ԲԻՒՐՕ

**ԱՐԻՒՆՈՏ ՀՆԳԱՄԵԱԿ**

Հէնց այդ կրքերի պատճառով այս սրամարտութիւնը չպահանջ: Կառուցիկը գեկուցման մասին սկզբում՝ լուրեր, յետոյ նաև ընդարձակ յօդածներ երևացին գլխաւորապէս առուական մամուլի էջերում՝ ստորեւ տալով գնահատել թիւր մեկնութիւններ և վերադրումներ: Այս անպատահութեանց հանդէպ իր իսկական տեսակէտները պայտապանելու համար՝ Կառուցիկն, փոքր ինչ բարեփոխելով և ընդարձակելով վերոյիշեալ գեկուցումը՝ հրատարակել է առանձին գրքիկով, «Die International und Sowietrussland» վերնագրերով:\*)

Անհրաժեշտ է, որ հայ յեղափոխական շարքերը ծանօթանան մեր հեղինակի տեսակէտներին, որովհետև նրանք այնպիսի մի խնդրի են վերաբերում, որ իրոտ ծանրակշիւ հանգամանք ունի և՛ մեզ համար:

«Աշխատաւորական Մտերեստինայը — ստում է Կառուցիկն — իր գոյութեան առաջին ժամերից սկսած ամենակարեւոր գործերից մէկն է նկատել կախը առուական միահեծանութեան դէմ: Հէնց նրա հիմնադրութեան օրը, 1864 թ. Սեպտեմբերի 28-ին, Մարքսը յարտարարում է հիմնադրութեան կոչի մէջ\*\*): Թէ աշխատաւոր դասակարգի պայտապանութիւնն և ծարանալ իր սրամարտութեան տակ գտնած բոլոր միջոցներով... ընդդէմ՝ այն բարարտո իշխանութեան, որի գլուխը Սանկս. Պետերսուրցումն է գտնուում, իսկ ձեռքերը Եւրոպայի ամեն մի (կառավարական) դասիին մէջ» նա (Մարքսը) վրդովում է այն «սպուշ անտարբերութեան դէմ, որով Եւրոպայի բարձր դասակարգերը հանդիսանան էին շինում Կոմիտանս շինանութիւնները՝ նսանսարք և պահանջում էր բոլոր երկրների աշխատաւորներից այնպիսի մի

արտաքին քաղաքականութիւն, որի մէջ «բարոյականութեան և իրաւունքի սարտական օրեկները, որոնք կոչւած են կարգաւորելու մասնաւոր անհասանելի փոխարարներութիւնները, նկատին իրեն բարձրագոյն օրեկներ ազգերի փոխարարութեան գործում:»

«Այդ ժամանակներից — շարունակում է Կառուցիկն — երկու սերնդի կեսեր է հոսել և շատ բան հիմնովին փոխել: Բայց նորից բազմած է Ռուսաստանում մի «բարարտո իշխանութիւն», որը արհամարհական զբոյշով ոտի տակ է տալիս «բարոյականութեան և իրաւունքի սարտական օրեկները»: Նորից մենք վկայ ենք այն «սպուշ անտարբերութեան», որով Եւրոպան հանդիսանաւ եզաւ «Գոլկասան շինանութիւնների նսանսարք Ռուսաստանի կողմից»: Մենակ այն է փոխել, որ այդ անտարբերութիւնը ներկայ դեպքում շտահմանափակեց շարժար դասակարգերով»: Երբ «բարարտո իշխանութեան» գլուխն այլևս Պետերսուրցում չի գտնում այլ՝ Մոսկվայում — աւելի հեռու Եւրոպայից և աւելի մօտ Թաթարստանին — և որ «ճեառ ձեռները» ոչ այնքան «ամեն մի դասիին», որքան ամեն մի աշխատաւորական շարժման մէջ են պրպտում, և այն էլ ոչ միայն Եւրոպայի, այլ և ամբողջ աշխարհի» (էջ 6)

Այս թունաւոր համոտանութիւնը բնականաբար սեղիք է տալիս մի հարցի. — ինչն մեր օրերի Ա. Բ. Մտերեստինայը չէ պայքարում բուշէիկեան բարբարոտութեան դէմ այնպէս, ինչպէս պայքարում էր Առաջին Մտերեստինայը ցարական բարբարոտութեան դէմ: Կառուցիկն սրա հիմնական պատճառը գտնում է մի քանի հանգամանքների մէջ:

Առաջինն այն է, որ Հնդեբովարականները երկար ժամանակ բուշէիկների հետ ձեռք ձեռքի կապիտալիստական կարգերի դէմ պայքարած իրենցով՝ նրանց հանդէպ պահել են որոշ ընկերական զգացումներ: Ըստ Կառուցիկն այս վերաբերմունքը անտեղի է, որովհետև նախ՝ զգացմունքները ոչ մի աղիւղութիւն չունին խորհրդային Ռուսաստանի քաղաքականութեան մէջ: Այնուհետև՝ բուշէիկների մեծ մասը որ 1917-ից յետոյ են յարել շարժմանը, նման զգացումների հետ ոչ մի կապ չունին: Եւ վերջապէս հին բուշէիկները էլ, բացառութեամբ գործնական քաղաքականութիւնից դուրս գտնուող անուանաթիւ անհատների, հէնց այն մարդիկն են, որոնք զգեստ 1903 թից արարացնում էին սուտը, զրպարտութիւնը, բռնութիւնը նախկին կուսակից ընկերների վերաբերմամբ (էջ 14):»

Շօշափելի կերպով ցոյց տալու համար, թէ ինչ անանցանելի անդունդ է բացած բուշէիկների և ընկերակարականների միջև հէնց պարզ ընկերային կամ մարդկային յարաբերութիւնների տեսակէտից Կառուցիկն բերում է հետեւեալ օրինակը: Վրացական վերջին ապստամբութեան ժամանակ ապստամբները գեղում են մի շարք աչքի ընկնող բուշէիկների: Այդ առթիւ վրաց ապստամբ կոմիտեի անդամներից մէկը, որ կուսակարգութեան մէջ բարձր պաշտօն ունի, Կախանի, բուշէիկների մի ժողովում հետեւեալ գեկուցումն է տալիս, որ տպւած է Թիֆլիսի «Վրացայա Պրովրա» պաշտօնաթիւթի 1924 Սեպտեմբերի 11-ի համարում:

«Մենք մինչև հիմա (գերիկների վիճակի մասին) որ և է հարողրագրութիւն չարիքն ոչ մասունք և ոչ էլ ժողովների մէջ,

\*) Verlag Dietr 1925 Berlin. Գրովիւր լոյս է տեսել եւ առուական քաղաքականութեամբ Բերլինում:  
\*\*) K. Marx «Inauguraladresse»

որովհետեւ համոզւած էինք, որ նրանք ողջ և առողջ պիտի վերադառնան: Մենք զատա՛հ էինք, որ այդ մարդիկ (սպասումը մեղմեցնելով) չեն լուսնի նրանց ձեռք տալ: Իսկապէս էլ մենչևիկները այս ստեակէտից թոյլ, վախկոտ և մեղկ դուրս եկան: Նրանք փորձ արին դեմոկրատիկ սպասամբութիւն կատարել դեմոկրատիկ սկզբունքներով և չկամեցան մեր ընկերներէից ոչ միևկին սպանել, միևչոյս մենք ճրագնից գնդակահարում էինք հարիւրաւորներին, որոնց թուում են նրանց կեցրոնական կումիսէի անդամներին»:

«Կախիսիանի — անկացնում է Կառչկին — խօսում է կոմունիստներին առաջ: Նա այդտեղ անհրաժեշտ չէ համարում թաքցնել իր զգայմունքները: Հակառակորդներին մեծահոգի, մարդկային վերաբերմունքի հանդէպ նա այլ բան չունի բայց եթէ հեղեանք: Մարդ ուզում է նրան և նրա նմաններին անաճօթ, արևելակալ շներ անահանել: Սակայն արիւնարբու շունն էլ երախտապարտ է զգում իրեն մեղմ վերաբերմունքի համար: Եւ ամենից առաջ նա խաբել չդիտէ և կարեկցող է: Կոմունիստներն, ընդհակառակը, հեղեում են մեծահոգութիւնը այն հակառակորդներին, որոնք հարիւրաւոր ընկերներին գնդակահարութեանը չեն պատասխանում իրենց գերած պատանդներին գնդակահարումով:» (էջ 16)

Երբ մարդկանց բարոյական այլասերումը այս աստիճանին է հասած, ապա պարզ է, որ նրանք հանդէպ ընկերական վերաբերմունքի մասին խօսք իսկ լինել չի կարող:

Երկրորդ հանգամանքն այն է, որ շատ ընկերվարականներ բոլշևիկներին հետ ընկերական կապեր չունենալով հանդերձ, բոլշևիկներ համարում են ընկերվարութեան ուղղութիւններից մէկը և այդ պատճառով անթոյլատրելի են համարում նրա հանդէպ որդգրել այն թշնամական վերաբերմունքը, ինչ որ ընկալածորէն յարուցում էր հին ընկերվարականների մէջ ցարկովը:

Այս թիրիմացութիւնը շրեւու համար Կառչկին, մի քանի էջի վրայ, կարելի է ստել սպանելից քննադատութեան է ենթարկում ժամանակակից բոլշևիկներ իր յատկանշական երևոյթներով: Նա վեր է հանում նրա թայանը, որ ներկայացում է իբրև ընկերվարութիւն, բայց իրապէս «ամեն մի աւազակի և գողի հոսականալի գործ է» (էջ 9) անարգանքի սիւնին է գամում նրա ձգտումը՝ գաղափարական հակառակորդներին ֆիզիքապէս ոչնչացնելու՝ որ ընկերվարութեան տարեղբորեան մէջ չլուսած, չտեսնուած հրեշտութիւն է: Հրաշիկ խօսքերով խաբանուած է նրա փորձերը՝ առողջ, կեղծիքով, սպառնալիքով, կաշառներով այլասերելու աշխատարանական զանգամանքը թէ՛ Ռուսաստանում և թէ արտասահմանում և այսպիսով ընթերցողին ներկայացնում այն անանցանելի անդունդը, որ բացւած է բոլշևիկովի և ընկերվարութեան միջեւ:

Կառչկին չի անգիտանում, ի հարկէ, որ անցնալում — մինչև 1917 թ. — բոլշևիկներ ընկերվարութեան հոսանքներից մէկն էր ճանդիստանու, և, չնայած իր մի շարք քննադատելի կողմերին՝ ընդհանուր առմամբ զեկավարւում էր վերջինիս հիմնական սկզբունքներով: Սակայն ժամանակակից բոլշևիկներ հանդէպ վիթխ ճշմարտ համար այս անցնալը չբացատրէ է ի նկատի ունենալ, որից նա ինքն էլ երես է դարձրել, այլ նրա ներկայ էութիւնը «Ամերիկայում բազմաթիւ

միլիոնատէրեր կան, որոնք իրենց երիտասարդութեան ժամանակ ամենաաղքատ աշխատաւորութեան շարքերումն էին գտնուում: Աշխատաւորական ծագումը արգելք չէրու, որ նրանք յետագային գտնան աշխատաւորութեան ամենանախիզձ, ամենանսիրտ շահագործողները» (էջ 15): Այդպէս էլ բոլշևիկները — աշխատաւորութեան ծոցից ելնելով՝ նա այսօր դարձել է մի միահիծան իշխանութիւն, որ միւս տերող դասակարգերի իշխանութիւնից միայն իր «արտակարգ կոպտութեամբ և անմաճութեամբ է գանազանուում» (էջ 15):

Այս է պատճառը որ բոլշևիկովի օջակը հանդիսացող Երրորդ Ինտերնասիոնալից հետագիւց են բազմաթիւ ազիւր ընկերվարականներ՝ թողնելով այն ի սեփականութիւն «մի կողմից՝ աննկարագիր ստահակների (Lumpen), իսկ միւս կողմից՝ խելքից զուրկ երագողներին» (էջ 11):

Վերջապէս երրորդ հանգամանքն այն է, որ շատերը երկիւղ են կրում, թէ բոլշևիկներին հետագնելու կամ վերացնելու հետեւանքով անելի ևս մեծ բեկակոխն կը հաստատուի Ռուսաստանում և նրա սահմաններից դուրս:

Կառչկին զճոականորէն յետ է մղում այս միտքը նախ և առաջ «այն պարզ պատճառով, որ բեւախոնի յարթանակի հետ կապւած ամէն մի բան ներկայումս կատարւում է բուշևիկների կողմից այնպիսի չափերով, որ գերազանցել չի կարելի» (էջ 44): Նրանք «կուսակցութիւնը, որ մի ժամանակ դաւադրական կազմակերպութիւն էր ռուսական ցարկովի դէմ, այժմն այլ բան չի ներկայացնում, բայց հետ կաւարութիւնու ժողովրդի դէմ» (էջ 45): Նրանց հաստատած «խորհրդային կուսակցութեան գլխաւոր զբաղումն է, ստրիկներից ի վեր, աշխատաւորութիւնը Ռուսաստանում ստրկացնել, այլասերել, կամազուրկ դարձնել և բթոնցնել. այսինքն՝ նրան բոտ կարելոյն շատ անբեկունակ դարձնել իրեն ազատագրելու» (էջ 11): Այս բեժմը հիմա բոլոր ոչ-բոլշևիկեան կուսակցութիւններին թշնամին չէ միայն. նա չդարձել է հենց աշխատաւորութեան ամենակտանալու թշնամին: Ռուսական աշխատաւորութիւնը դատապարտուած է անցորութեան և սոցիտութեան, իսկ համաշխարհային աշխատաւորութիւնը՝ շնորհիւ Ռուսաստանում իշխող բոլշևիկեան մեթոտներին՝ անընդհատ արգելքների է հանդիպում իր ուժը ծաւալելու» (էջ 11): Այս ամէնը աչքի առաջ ունենալով Կառչկին հետեւցնում է, որ ներկայումս աշխատաւորութեան վերելքի ամենամեծ արգելքը, հետեւաբար յարձախելու բեւախոնի ամենամեծ արգելքը բոլշևիկներն են: Նրանց կառավարութիւնը «միևչու անպակ անելի վատ է, քան թէ Հորտիի անարդ բեժմը հունգարիայում և Մուսոլինիի բեժմը Իտալիայում», որովհետեւ նրանք աշխատաւորութեան ամէն մի ընդդիմադիր շարժում գոնէ այնպէս անկարելի չեն դարձնում, ինչպէս խորհրդային բեժմը:

Մրանով է բացատրւում, որ «նախկին սպիտակ զարդականներից շատերն արդէն գտնում են, որ բոլշևիկովի նպատակները անելի դիւրութեամբ կը հասնին իրենց հաստատութեան, քան թէ նրա դէմ կուլելով: Նրանք ծառայութեան են մտնում՝ բոլշևիկներին մտն և աշխատում նրանց համար՝ առանց փոքրուս իրենց էութիւնը և միայն սպիտակ պաշտօնագրեայտը կարմիրի վերածելով » (էջ 45):

Բողջելիզմի այս գնահատութիւնն արդէն աւելորդ է դարձնում նրա տապալման հետ կապւած երկիւղները: Մակայն Կառչկուհւ նրանք անհիմն են թուում և այն տեսակէտից, որ նա հանրապետ է, թէ Ռուսաստանում է լինելու բնակչոնի այնպիսի ուժեր, որոնք ատակ լինէին երկիւղ ներշնչելու: Այդ ուժերն ընդհանուր առմամբ ջանջաբաւած կամ քայքայուած են: Բոլոր կալաւածատիրութիւնը վերականգնելու, կամ հողը գիւղացիներից խլելու մասին ոչ որ չի մտածում, և դիւրացիութիւնը, որ Ռուսաստանի ընկերային կազմի ամենաուժեղ շխն է՝ Հանդիսանում ոչ մի պտտճառ չունի բեակսիոնի գիրկը նետուելու: Այսպիսի պայմաններում ինչ կառավարութիւն էլ յաջողելու լինի խորհրդային իշխանութեանը՝ յամենայն դէպս վերջինից թող պէտք է լինի անկախ իր կազմութիւնից (էջ 44): Հետեւաբար և չի կարող ներկայացնել Ռուսաստանի և արասասհանի համար բեակսիոնի այն վտանգը, որ վերագրում է նրան:

Բողջելիզմի և բողջելիկների հանդէպ ընկերվարական շրջանակներում նկատուած տասանուամբների իրաւացիութիւնը վերոյիշեալ հիմունքներով բացասելուց յետոյ՝ Կառչկին այլեւ բոլոր ընկերվարականների համար ճշուած է համարում, որ «բողջելիկան մեթոտների յաղթահարելը աշխատաւորութեան զսակարգային պայքարի, դրա հետ միասին և Ա. Բ. Մետերնախոնիով, ամենակարեւոր խնդիրներից մէկն է հանդիսանում» (էջ 11):

Այդ, չարք է ձագում, թէ ինչպէս պէտք է լուծել այս խնդիրը: — Բնականաբար ամեն մի ընկերվարական նախ և առաջ երազում է խաղաղ միջոցներով, աստիճանական բարեփոխութիւններով բողջելիզմը վերացնելու մասին, որովհետեւ արդկսով միայն կարելի է այս գործի համար անխուսափելի զոհաբերութիւնը նւազագոյնի իջեցնել: Մակայն Կառչկին այն կարծիքին է, որ խաղաղ ճանապարհով անկարելի է հասնիլ այս նպատակին, որքան էլ այդ ճանապարհը սկզբունքորէն լաւագոյն կամարի:

Նրա ասելով՝ բողջելիկները կը համաձայնէին իրենց մեթոտները բարեփոխել կամ, ուրիշ խօսքով, սարսափի բեժիմին վերջ տալ այն դէպքում միայն, եթէ նրանց յաջողէր, ժողովրդական զանգաւածների բարեկեցութիւնը բարձրացնելով նրանց համակրանքը շահիլ մինչեւ այն աստիճան, որ այլեւ կարիք չլինէր նրանք բռնութեամբ հնազանդութեան մէջ պահելու: Իբրախտաբար իրականի մէջ մննք ոչ թէ ժողովրդական բարեկեցութիւն ենք տեսնում, այլ այն, որ դրան վերաբերեալ բազմաթիւ խոստուածները, որոնցով բողջելիկները մի ժամանակ հետեւորդների մեծ բազմութիւն էին գրաւել, «մէկը միխի յետուից սխալուեք և պատրտնք են հուշակուում» (էջ 15):

Այսպիսով բողջելիկան բեժիմը իր տէւօրով՝ փոխանակ հանրային բարօրութեան՝ աղքատութիւն և թշուառութիւն բերելով ամենքի համար՝ անխուսափելիորէն «ընկնում է յարաձիւն հակասութեան մէջ ժողովրդական զանգաւածների շահերի հետ, որով աւելի ու աւելի պիտի ստիպուէլ յենւելու սուխնների և զահճի վրայ: Այլ կերպ չի կարող կառավարել մի չնչին փոքրամասնութիւն, որ ամբողջ պետութիւնը օր բաւ օրէ մեծացող թշուառութեան գիրկն է նետում» (էջ 14,

17): Հետեւաբար և նրա աստիճանական բարեխաւան հետ կապուած յոյսերը միանգամայն անհիմն են:

« Մինչայժմայ փորձը քրչք է տալիս, ասում է Կառչկին — որ ժողովրդական մեծ զանգաւածների պահանջներին հակասող բռնապետութիւնը, որի գոյութեան հիմքը ոչ թէ տնտեսական անբարձեւտութիւնն է հանդիսանում, այլ կուրօրէն հնազանդ ոտարկանութիւնը և զօրքը՝ զեթէ երբէք այլ կերպ չի յաղթարելու, բայց եթէ բռնի ուժի միջոցով» (էջ 12): Այդ փորձն աչքի առաջ ունենալով՝ նա պնդում է, թէ «ինչպէս ամէն մի զինւորական բռնապետութիւն, ինչպէս Ռոմանովների Հաբսբուրգների և Հոհենցոլերների զինւորական միապետութիւնը նա (բողջելիկան բեժիմը) ևս միայն բռնի ուժով պէտք է յաղթահարել» (էջ 17):

Բայց ինչ է նշանակում այստեղ «բռնի ոյժ», դարձաւորքը, Հակառակ բողջելիկների, որոնք «բռն միակողմանիութեամբ» միայն զինուած ըմբոստութիւնն (Putsch) են համարում բռնի ուժի միակ ձեւը քաղաքական կեանքի մէջ՝ Կառչկին այս դարձաւորքը լայն առածով է գործածում: «Բռնի ոյժ պէտք է նկատենք մեք այստեղ — ասում է նա — ամէն մի տեսակի ճնշում, որ մէկին ստիպում է անել կամ թոյլատրել այն, ինչ որ նա կամովին չէր անի, կամ չէր թոյլատրի: Պատմական հանգամանքներից է կախուած, թէ ճնշման տեսակներից ամենաազդունն սրը կը լինի» (էջ 11):

Բողջելիկների դէմ կիրառուելիք ճնշման միջոցները Կառչկին բաժանում է երկու կարգի. քաղաքական անշտում և ասպատակութիւն:

Առաջինի գործադրութիւնը մեր հեղինակը հիմնաւորում է հետեւեալ ձեւով —

Ռուսական բողջելիզմի յարատեւումը արդկնը է գլխաւորապէս երկու հանգամանքի: Սրանցից առաջինը Ռուսաստանի տնտեսական քայքայումն է, որ կազմաւորելով երկրի հասարակական ուժերն և մասնաւորապէս աշխատաւորական զանգաւածները՝ թուլացնում և մինչեւ իսկ ոչնչացնում է նրանց դիմադրական ուժը, իսկ երկրորդը՝ Ռուսաստանի կղզիացումը արտաքին աշխարհից, որ մի կողմից՝ նպաստում է վերոյիշեալ քայքայմանը իսկ միւս կողմից՝ միջոցում առաւ ժողովրդի քաղաքական մտածողութիւնը և դժարացնում նրա համար փրկութեան ուղիներ որոնելու գործը: Առաջին հանգամանքը հետեւանք է Ռուսաստանում կոմունիստական հասարակակարգ հաստատելու փորձերի, որոնցով բողջելիկները ձգտում էին մի կողմից՝ ունեւորներին թալանել, իսկ միւս կողմից՝ ժողովրդական լայն զանգաւածների համակրանքը շահիլ, իսկ երկրորդը՝ համաշխարհային ընկերային յեղափոխութեան քարտի, որ բողջելիկների աչքում լոկ միջոց էր հանդիսանում իրենց գոյութեանը սպառնացող արասասհաննեան կառավարութիւնները քայքայելու և դրա հետ միասին գատարկուած պետական զանաւարաքը նոր թայանեւումով լեցնելու համար:

Այս երկու հանգամանքները իրար լրացնելով և իրար պայմանաւորելով թէւ մի կողմից նպաստել են բողջելիկան բեժիմի յարատեւմանը, միւս կողմից սակայն հասցրել են երկիրը այնպիսի մի փակուղու առաջ, որ եթէ օր առաջ

չբացի՛ նրա պայթումը ներքից անխուսափելի է դառնալու։ Սարսափած ժողովրդական զանգառների պոռթկման հեռանկարից՝ բողջեկիները ձգնում են հիմա, ինչ գնով ուզում է լինի, վերականգնել Ռուսաստանի տնտեսական կեանքը։ Բայց որովհետև դրա համար երկրում ոչ դրամ կայ և ոչ էլ տնտեսական նախաձեռնություններ և կազմակերպություններ ընդունակ ունեն, այդ պատճառով նրանք ստիպված են փոխառություն մտալով արտասահմանում և դրա հետ միասին օտար կապիտալիստներին հրապուրել դեպի Ռուսաստան։

Այստեղ է ահա, որ բոլշեակների վրայ քաղաքական ճնշումներ բանեցնելու հնարաւորութիւններ են բացւում Ե. Ը. Խնտերնասիոնայի և ընկերավարական կուսակցութիւնների համար։ Օգուտեով բոլշեակների անկե կացութիւնից՝ նրանք պէտք է ճնշում գործ դնեն այն կուսակցութիւնների և կապիտալիստների վրայ, որոնց օգնութեան են դիմում բոլշեակները, որպէսզի նրանք իրենց տալիք օգնութիւնը պայմանաւորեն բոլշեակեան րեժիմի վերացումով կամ մեղմացումով։

Գալով ապստամբութեան խնդրին՝ Կաուցկին տարբերում է իրարից երկու բան. — Նախապատրաստւած զինւած ապրտասիրութիւն և ժողովրդական ինքնաբարձի ապստամբութիւն։ Երկուսի նկատմամբ էլ նա սկզբունքօրէն դրական վերաբերմունք ունի, որովհետև համուած է, որ «ապստամբութիւնը յաջողութեան դեպքում կը մեծացնէր աղատութիւնը Ռուսաստանում... Նորոգ կեանքի կը կոչէր (չեղափոխութեան) նաւառններից շատերը և այսպիսով կը բարեւաւէր ժողովրդական զոնդաւանների և մասնաւորապէս աշխատատեղութեան դրութիւնը» (էջ 45)։ Սակայն գործնականի միջոց նա դէմ է նախապատրաստած ապստամբութեանը, որովհետև, ասում է նա, «դու համառոտաբար պատերազմից առաջ մենք եկել ենք ամենուրեք այն համոզման, որ ի նկատի ունենալով այսօրուայ զինական տեխնիքի և հազարազակցութեան վիճակը՝ նման ապստամբութիւնները անյուշ բաներ են (էջ. 38)։ Այս նկատումով էլ, աւելացնում է նա, «Սոցիալ գեմիկրատ կուսակցութիւնները բոլոր երկրներում միշտ մերժել են սիստեմատիկ կերպով նախապատրաստւած ապստամբութիւնը իրրեւ աննպատակաշարժար միջոց, որը մեծ զոհեր պահանջելով հանդերձ՝ այլ հետևանք չէ տալիս, բայց եթէ ուժեղացումը այն բռնի միջոցների, որոնցով տիրող իշխանութիւնները ձգտում են պահպանել իրենց գոյութիւնը» (էջ 40)։

Եթէ այսպէս է նախապատրաստւած ապստամբութեան վիճակը օժտրական երկրներում, ապա հասկանալի է, որ նա աւելի լաւ չի կարող լինել խորհրդային երկրներում, ուր կոոտակցութիւնը իր ցանցերը տարածում է մինչև մարդկային յարաբերութիւնների ամենամտերիմ շրջանակները, ուր զօրքն ու ոստիկանութիւնը ստիպօրէն նեխուած են օրուայ իշխանութեանը, և օր այդ իշխանութիւնը ոչ մի սրբութեան, ոչ մի գաղափարութեան առաջ կանգ չէ առնում իր գոյութիւնը պահպանելու համար...

Այս հանդամանքներն աչքի առաջ ունենալով՝ Կաուցկին կարծում է որ «Ինտերնասիոնալը բոլոր հիմունքներն ունի, ինչպէս մինչև հիմա, այնպէս էլ այսօրհետև վճռական

նօրէն դիմադրելու բոլոր նախապատրաստւած ապստամբական փորձերին այն երկրներում, որոնց վրայ ներկայումս իշխում է Մոսկվան» (էջ 46)։

Ոչ վերաբերում է ժողովրդական ինքնաբարձի ապստամբութեանը՝ սրա մասին Կաուցկու կարծիքը բոլորովին տարբեր է. այս ապստամբութիւնը կարող է տարբերային թափով այնպէս ծաւալուել, որ նրա դէմ անդօր հանդիպական ամենազօրեղ բռնապետութիւններն իսկ՝ Նոնան մի ապստամբութիւն անհաւանական չէ մտաւանդ բոլշեակների դէմ։ «Թորհրդային Ռուսաստանի վիճակն այնքան օտարափելի է, և նրա կառավարութեան քաղաքականութիւնը այնքան արկածախնդրական՝ որ մենք այսպիսի ապստամբութիւնների կարելիութիւնը պարտաւոր ենք հաշի առնել» (էջ 61)։

Այսօրինակ ապստամբութեան դեպքում «օրհասական սխալ կը լինէր — ասում է Կաուցկին — եթէ մեր Ինտերնասիոնալը՝ հիմնելով իր բացասական վերաբերմունքի վրայ դեպի նախապատրաստւած զինւած բնթատութիւնը բոլշեակի դէմ՝ չէնց էն գլխից դատաւարտէր ամէն մի ապստամբութիւն նրա դէմ իբրև հակալոյզափոխական արարք և տրդիւրալ անդամներին Ռուսաստանում՝ այսպիսի ապստամբութեան մասնակցութեւ» (էջ 49) Ժողովրդական ինքնաբարձի ապստամբութեան պարագային Ինտերնասիոնալը ռուս ընկերավարականներին պէտք է ձգէ իրենց վարքադիւր մշակելու խնդիրը։ Կաուցկու կարծիքով այդ վարքադիւր չի կարող լինել ոչ ընդդիմութիւն և ոչ իսկ ձեռնապահութիւն ժողովրդական շարժման հանդէպ։ Ընկերավարականները պէտք է վճռականօրէն կանգնեն շարժման գլուխը, եթէ չեն ցանկանում որ նրա դեկավարութիւնը անցնի կապածելի տարբերի ձեռքը, և ժողովրդական ապստամբութիւնը հակաժողովրդական նպատակների համար շտհագործի։

Իսկ որպէսզի վճռական բուզէին ընկերավարականները առանց տատանումների գործի անցնեն՝ հարկաւոր է որ նրանք նախօրօք «հոգեւորապէս պատրաստեն» ժողովրդական ապստամբութեան համար. հարկաւոր է որ նրանք թողարկեն այն մտքով, որ «բռնութեան դէմ պաշտպանելու ընկական միջոցը էլի բռնութիւնն է» (էջ 60)։ Վերջապէս անհրաժեշտ է, որ նրանք պարզ գիտակցեն, որ զինուորական ուժին յենւած բռնապետութիւնը մինչև հիմա գրեթէ միշտ ժողովրդական ապստամբութեանը է տապալել, կամ թէ չէ՝ իրեն նեցուկ հանդիսացող տարբերի դիմադրութեան շնորհիւ (էջ 60)։

Ահա այս մտքի նուաբանութիւնն է կազմում Կաուցկու գրքոյի հիմնական ապրանքը։ Այդ կատարելը նրան այնքան կարեւոր է թուում, որ նա, գիտակցելով հանդերձ որ նրա մասին հրապարակօրէն խօսելը զիտի կատոցցնի բոլշեակներին և էլ աւելի ձանրացնի նրանց ճիրաններում տառապող ընկերավարականների վիճակը՝ այնուամենայնիւ հրապարակային քննութեան նիթ է դարձնում այն։

Կաուցկիի այս գրքովը ահաբից աղմուկ է հանել. Հակաբոլշեակեան մամուլը — Ե. Ը. Խ, Սոցիալիստիչեսկի վեսնիկ, Պոպուլիստ նովոուսի ևն. երկարաշունչ յօդուածներ ներքեցնի նրան։ Այժմ էլ բոլշեակեան մամուլն է նրանով զբաղւում։ Բուխարինը Պոպուլիստի թերթիւններն է բռնել Կաուցկու պատասխանելու համար։ Նրան անշուշտ պէտք է հետեւեն ու

բիշնբը, որովհետև մեր Հնդկանքը շատ լքօրէն խռովել է բոլշեւիկների Հանդիսարւ: Վերջիններս՝ վարժաւ ընկերվարաւ-կանների կողմից շարունակ գառապարտութեան խօսքեր լսելու այն մարդկանց Հասցէին, որոնք բոլշեւիքը բռնի ուժով խորտակելու մասին են մտնում՝ Հարկաւ չեն կարող առանց մտահոգութեան կարգալ Հակաբոլշեւիկեան ժողովրդական ապստամբութեան այն կողմ որ Կառուցվու պէս ազդեցիկ մարդու ստորագրութիւնն է կրում:

Անվիճելի արժանիքների Հետ, որոնց մասին կը խօսենք ստորև, այս գրքոյին ունի նաև թերութիւններ, որոնցից մի քանիսը անհրաժեշտ ենք Համարում վերջահանել այստեղ:

Դրանցից առաջինն այն է, որ Կառուցիկն իր կարեւոր մտքերից շատերը աւելի շուտ յայտարարում է, քան թէ Հիմնադրում: Սրա պատճառը թերեւս գրքի փոքրիկ ծաւայն է, կամ այն, որ այդ մտքերը իր այլ գրածքներէ մեջ հիմնադրում են. բայց այսպիսի մի աշխատութեան մեջ, որ գործնական քաղաքականութեան մի նոր ուղի է գծում, նրանց Հիմնադրման պակասը խիստ զգալի է:

Այսպէս օրինակ Կառուցիկն յայտարարում է, թէ Հակա-յեղափոխական տարրերը Ռուսաստանում չեն ներկայացնում այն վտանգը, որ անհրաժեշտ լինէր նրանց Հաշի առնել այս կամ այն քայլը անելիս: Որտեղից է առնում նա այս տեղեկութիւնը — չգիտենք: Ամենայնոք իրողութիւն է, որ արտասահմանում գտնւած ռուսերի շախշախիչ մեծամասնութիւնը բաղկացած է միապետականներից և Հակաչեղափոխականներից: Չենք ժխտում, որ արտասահման անցած ռուսները « ընտրովի » մարդիկ են և Հակաչեղափոխականները Ռուսաստանում շատ քիչ տոկոս են կազմում քան արտասահմանում: Բայց ասելու Համար, թէ նրանք այնքան չեն յին ոչ են ներկայացնում, որ Հարձէ Հաշի առնել, Հարկաւոր է լուրջ հիմունքներ ունենայ, որ մերքէ չենք գտնում Կառուցիկու գրքի մեջ: Դրա Համար էլ մենք մտում ենք մեր այն Համոզման մեջ, որ ընկերվարականները Ռուսաստանում շատ աշխատանք ունին կատարելիք ոչ միայն կարմիր Հակաչեղափոխութեան այլև սև Հակաչեղափոխութեան ճակատի վրայ և որ նրանք առաջինների Հետ Հաշի նստելիս շատ լքօրէն Հաշի պիտի առնեն վերջիններից սպասելիք վտանգները:

Երկուհետեւ Կառուցիկն բոլշեւիկեան թեժիսի փլուզումի անխուսափելիութիւնը շարունակ որոնում է Ռուսաստանի տնտեսական քայքայման մեջ: Ի՞նչ Հիման վրայ — դարձեալ չգիտենք: Սակայն փաստերը ցոյց են տալիս, որ այդ թեժիքը սկսում է ճարճառեղ և նահանջ նահանջի յետեւից կատարել Հէնց այն ժամանակ, երբ Ռուսաստանի տնտեսական քայքայումը կանգ է առնում և մինչև իսկ տեղի տալիս որոշ յառաջադիմութեան: Այս բանը շատ լաւ գիտեն Ռուս ընկերվարականները. այդ պատճառով էլ նրանց Համոզմունքը՝ բոլշեւիքի անխուսափելի կործանման մասին՝ ամենեւին չէ խախտում այն թւերից, որ Բուխարինը այստեղից—այնտեղից ժողովում է Ռուսաստանի տնտեսական զարգացումը ապացուցանելու Համար: Մինչդեռ այդ թւերը Կառուցիկու պաշտպանած տեսակէտից կարեւորութիւն են ստանում ընթերցողի աչքում:

Վերջապէս Կառուցիկն բաւարար չափով չէ պատճառաբանում իր բացասական վերաբերմունքը դէպի նախապատ-

րաստում զինւած ապստամբութիւնը, Համաձայն ենք նրա Հետ, որ փոքրթիւ խմբակների զինած պողովուսները (Putsch) կամ այդ պողովուսների նախապատրաստութիւնը շատ աւելի մեծ է պատճառում յեղափոխութեանը, քան թէ օգուտ: Բայց մի՞թէ զինւած ապստամբութիւնը անպատճառ գինւած պողովում է նշանակում: Իսկ եթէ կարելի լինէր դիցուք կարմիր բանակը ապստամբեցնել սիրող իշխանութեան դէմ — մի՞թէ դա զինւած ապստամբութիւն չէր լինի: Անկասկած կը լինէր և այն էլ այնպիսին, որի Համար չի կարելի առանց այլևայլութեան ասել, թէ նա դատապարտւած է անշոգութեան, որովհետև տիրող իշխանութեան զինական տեխնիքայն աւելի մեծ է քան ապստամբներինը... Արդ, ինչու չի կարելի այսպիսի մի ապստամբութիւն նախապատրաստել. — Հարցի պատասխանը չենք գտնում Կառուցիկու գրքի մեջ:

Մեր յօդուածի ծաւայը չի թողարարում նկատողութիւնների այս շարքը աւելի երկարացնել: Կարծում ենք սրանք էլ բաւական են Կառուցիկու գրքի թերութիւնների մասին մի գազափար տալու Համար:

Սակայն բոլոր թերութիւններով Հանդերձ այս գիրքը ունի մի շարք արժանիքներ, որոնք միանգամայն արդարացնում են այն մեծ Հետաքրքրութիւնը, որ նա առաջ է բերել թէ Ռուսաստանում և թէ արտասահմանում:

Սրանցից առաջինն այն անշրջան է, որ Կառուցիկն ամենայն վճռականութեամբ է առանց որևէ վերապահութեան քաջում է ընկերվարութեան և բոլշեւիզմի միջև: Այս կէտի վերաբերեալ արտայայտութիւններն այնքան որոշ են, ցայտուն և Հիմնաւորւած, որ կարծում ենք, ընկերվարական բանակում այսուհետև գոնէ խօսք չի կարող լինել բոլշեւիկների Հարապատութեան մասին, և աստանուսները նրանց Հանդէպ վերջ կը գտնեն:

Երկրորդ արժանիքը գործնական պայքարի, յեղափոխութեան և մինչև իսկ ապստամբութեան օրինհետախնդն է, որ քառուղում է Կառուցիկն Համաշխարհային ըժակախոնի ամենախոշոր ազդակը Հանդիսարւ գոլշեւիզմի դէմ: Մինչև այժմ այսպիսի օրինհետախոնի խօսքեր չուում էին միայն Սոցիալիստ յեղափոխականների կուսակցութեան կողմից: Բայց որովհետև այդ կուսակցութիւնը կենքի և մահան պայքարի մեջ է գտնում բոլշեւիզմի դէմ, նրա խօսքերը ենթակալական գունաւորում էին առնում ունկեղիւնների աչքում: Նոյն խօսքերը Կառուցիկու բերանում այլ կշիռ են ներկայացնում և այլ ազդեցութիւն կ'ունենան ընկերվարական աշխարհում:

Վերջապէս երրորդ արժանիքը կայանում է նրանում, որ Կառուցիկն ռուսական խնդիրը դարձնում է Ա. Ը. Մետերնախոնալի խնդիրը, որովհետև նա ընդգրկում է ոչ միայն ռուս ժողովրդի, այլև ամբողջ քաղաքակիրթ աշխարհի շահերը: Ինտերնասիոնալի և նրան շարող-կուսակցութիւնների գործնական հետաքրքրութիւնը դէպի Հակաբոլշեւիկեան պայքարը դուրս կը բերի ռուս աշխատարարութիւնը լքուածութեան զգայունմից և նոր թափ կը Հազարէ նրա ապաստարանական ճիգերին:

Չերկարացնելու Համար, չենք ուզում կանգ առնել Կառուցիկու գրքի միւս արժանիքների վրայ: Կասենք միայն, որ

նրանք, զուգորդելով վերոյիշեալներին՝ կսկսած չեն թողնում ընթերցողի մէջ, որ հակաբալլեիկեան յեղափոխութեան խնդրը սկսում է սուր հանգամանք առնել ոչ միայն ուսումնական և միջազգային մոլորաբալլի:

Այս նոր հանգամանքը եթէ միացնենք վերջին ամիսները ընթացքում խորհրդային իշխանութեան կատարած խուճուպային նահանջներին՝ այն ժամանակ պարզ կը լինի, թէ ինչ արժէք են ներկայացնում բալլեիկեան բեժիմի կալուստեան վերաբերեալ այն լուրերը, որոնցով, այդ բեժիմի ջատագովները մի քանի ժամանակից ի վեր ազդում են քաղաքական հրապարակը:

Ա. Զ.

## ՌՈՒՍԱՍԱՆԸ ԱՐՏԱՍԱՀԱՆՈՒՄ

### ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆՆԵՐԸ

Կարելի է առանց չափազանցութեան ասել, որ երկու միլիոնոց ուսուսարարութեան ութնուն տոկոսը ունի միապետական մտայնութիւն: Մնացեալ մասը հանրապետական է, որ կոտորակած է բազմաթիւ հասուածներու եթէ մի կողմ թողնենք մանր խմբակները, ընդհանուր առմամբ հետեւեալ պատկերն է ներկայացնում հանրապետական ուսուսարարութիւնը:

Աջից առաջին տեղը բռնում է, այսպէս կոչւած, Հանրապետական-Դեմոկրատական Միութիւնը Միլիոնովի գլխաւորութեամբ: Կազմական կուսակցութեան ձախ թէն է սա, որ վերջերս իր մէջ է առել մի շարք էսէրական կուսակցութիւնից հեռացած և շեղոք անձնաւորութիւններ, ինչպէս Արզուսովը, Կուսկովան, Ս. Մասլովը և այլն: Կուսակցութիւն չէ, այլ հանրապետական չափաւոր հոսանքների համախմբում: Նրան մօտ են զգում իրենց և՛ Պարիզի Սովիեթներին և Չապայի Զարիս արտոյալ-գեմոկրատական թերթի խմբակը, և՛, այսպէս կոչւած, «ժողովրդական-սոցիալիստները» և այլն: Հանրապ. Գեմ. Միութեան կեդրոնը Պարիզ է, բայց Քիւղեր ունի և Պրագայում, Լիդուսում, Մարսելում և այլն: Օրգանն է Միլիոնովի Պոպուլյար Նովոսի օրաթերթը. գաղափարախօսը Միլիոնովն է: Գաղութաուսուսուսարարականութեան աչքի ընկնող ներկայացուցիչները նշատելի կերպով ուժեղանում և Միութիւնը ձգտում է հաստատել Ռուսաստանում ժողովրդավար հանրապետութիւն, մեծ տեղ է տալիս գիւղացիական խնդիրին, պաշտպան է մասնաւոր նախաձեռնութեան և գրամատիական անտեսակարգի: Հակառակ է արտաքին ուղիւ. մտութեան և բունի միջոցների բալլեիկեան մեթոդը տապալելու համար, բայց մղում է գաղափարական անհաշտ կուս. Հաւատում է, որ, հետզհետէ, ներքին պրոպեդի հետեւնեցով, Ռուսաստանում կը հասունանան նոր ուժեր, որոնք ներքից կը տապալեն խորհրդային իշխանութիւնը: Միութիւնը կապ է պահում երկրի հետ, գլխաւորապէս, իր գրականութիւնը հասցնելու համար:

Գաղութաուսուսարարական յարոգչ հոսանքը սոցիալիստ-յեղափոխականների կուսակցութիւնն է, որ իր հերթին բաժանւած է ներքին հասուածների Աջ

թեի կեդրոնը Պարիզն է, ուր հրատարակում է Սովիեթներին և Չապայի լուրը ամսագրեր: Այնպիսի աչքի ընկնող էսէր գործիչներ, ինչպէս Ա. Կուսկովը, Բուշակովը, Ռուզնը, Միլոսը, Վիլնիսկը և այլն, պատկանում են այս թեւին: Զարեալ համախմբւած են Պրագայում, ուր գտնւում է կուսակցութեան արտասահմանեան կեդրոնը — Արտասահման Պատերազմութիւնը ու Երթնային կոմիտէն և հրատարակում են կեդրոնական օրգան Ռեւոլյուցիոննայա Ռոսիա ամսագիրը և Վոյա Ռոսիի գիտական-քաղաքական ամսագիրը: Այս թեւին են պատկանում Ա. Զերնովը, Ստալինսկին, Լէրեզեւը, Ալեխովը, Երեզեւը, Սլոնիմը և ուրիշներ: Առհասարակ, այս ուղղութիւնն է համարում կուսակցութեան պաշտօնական ուղղութիւնը, որ բղիւսում է երկրի կազմակերպութիւնները, հաստատւած է նրանց կողմից և լայն հետեւորդներ ունի արտասահմանում: Այս երկու թեւերի ներքին յարաբերութիւնը բաւական լարւած է, բայց պահպանւում է կազմակերպական միութիւնը և արտաքին սուր բաղադրանքներ չկան: Երբեմն տեղի են ունենում բանավէճեր տարածախմբութիւն առաջ բերող հարցերի շուրջ: Ցարածայնութիւնները պնդում են սովիեթական հարցերի շուրջ — ընկերային մեծմասը յետ բալլեիկեան Ռուսաստանում, համագործակցութիւնը ոչ-ընկերակարական սովիեթական տարրերի հետ, ուսուսարարական խնդիրներ և այլն: Անկական, էսէրական կուսակցութիւնը սերտ և օրգանական կապերով կապւած է երկրի հետ, բայց բալլեիկների գործադրած անօրինակ բռնութիւնների ու պրոֆոգանայի հետեւանքով նրա կազմակերպութիւնները Ռուսաստանում յաճախ ենթարկւում են քաղաքական խեղճարկան մտայնութիւնը, սակայն, երկրում է, մասնաւոր, գիւղացիութեան մէջ շատ ուժեղ է Այդ երեւում է և բալլեիկեան մտայնը:

Բերլինի էսէրները, որոնք համախմբւած են Դեի օրաթերթի շուրջ (որը օգոստոսից փոխադրելու է Փարիզ) — Կերլինսկին, Ջէնիսովը և այլն — իրենց հակումներով աւելի մօտ են Փարիզի թեւին Դեի էսէրական գուսուսարում ունեցող իրաւ հակաբալլեիկեան օրաթերթ է և խմբագրւում է Վերեմսկիի կողմից:

Արտասահմանում կան և նախկին ժախ — Կուրնները, որոնք մի ժամանակ գործակցում էին բալլեիկներին և մտնում էին խորհրդային իշխանութեան կազմի մէջ: Սրանց պարագլուխները Ռուսաստանում բանտարկւած են: Ազատածները Բերլինում հրատարակում են Անտեան Ռեւոլյուցիոնի անունով մի ամսագիր, որի մէջ կատարի պայքար են մտնում թէ բալլեիկների և թէ էսէրների ու մէնշեիկների դէմ: Պաշտպանւում են ընկերային յեղափոխութեան և «խկական խորհուրդները» գաղափարը: Կուսակերպական բոլոր կապերը կտրել են էսէրական կուսակցութեան հետ: Հաշտ առնելից ոչ չեն և աննշան հետեւորդներ ունին երկրում և արտասահմանում:

Հանրապետական երրորդ հոսանքը Ռուսաստանի Սոց. Դեմոկրատական բանտարկական կուսակցութիւնն է (մէնշեիկ), որ նոյնպէս բաժանւած է մի քանի թեւերի: Գլխաւոր մասը այն ուղղութիւնն է, որը ներկայացում է Բերլինի Սոցիալիստիկականի Վեսնիկ երկաթաթաթերթի կողմից: Գանի և Արամովիչի գլխաւորութեամբ:

Գ Ր Օ Շ Ա Կ Ա Ն

La Société des Nations et les Puissances devant le Problème Arménien, par André N. Mandelstam, 1925, Paris, էջ 355.

Մենչեհիկները ուստարագրութեան մէջ մեծ ազդեցութիւն չունին, բայց Ռուսաստանի գործարանային կեդրոններում մուսական ուժեղ են բանւորութեան շարքերում: Սրանք էլ, Հանրապետական-դեմոկրատներին նման, դեմ են գիււսած պաշարի և արտաքին միջամտութեան ընդդէմ խորհրդային իշխանութեանը Աւելին որանք կողմնակից են խորհուրդներին — «ազնիւ խորհուրդներ», բայց բոլշեւիկներին վարած քաղաքականութիւնը չեն ընդունում և Համարում են դաւաճանութիւն մարկսիզմի և յեղափոխութեան դէմ: Իրենց պայքարը խորհրդային իշխանութեան դէմ սահմանափակում են գաղափարական խիստ քննադատութեամբ և բանւորական կազմակերպութիւնների միջոցով բանեցած ազգացուծիկներով: Դեմոկրատները և մենչեհիկներին փոխարարներութիւնը բարեկամական չէ. յաճախ նրանց միջմոյսում է բուռն բանակիւ ձակամարտութիւնը արտասույտում է և Աւելորդական Միջազգայնականում, ուր երկու կուսակցութիւններն ունին առանձին ներկայացուցչութիւններ:

Բոլշեւիկները ուստարագրութեան մէջ առանձին կազմակերպութիւններ չունին և շատ աննշան ոյժ են ներկայացնում: Մի ժամանակ կային, այսպէս կոչւած, Անեօսփիսովիցները (ուղղութիւնը փոխածներ), որոնք հրատարակում էին Բէրլինում Նախաճառն լրագիրը և որոշ ազնուկ Հանում էին Այժմ գրանք էլ անհետացել են: Բոլշեւիկները գլխաւորապէս խորհրդային հիմնարկութիւնների պաշտօններն են կամ խորհրդային իշխանութիւննց որոշ անկախութիւններ ունեցող պնակաւիներ: Խորհրդային ներկայացուցիչները մերթ ընդմերթ կաշառում են այս կամ այն տարագրին, որոնց միջոցով որոշ ժամանակ ազնուկ են Հանում և զրանով ինչպէր փակում է: աւելի բան չեն կարողանում տնէ՛ ուստարագրիներին մէջ, որոնք անվերապահ Հակաբոլշեւիկներ են: Փարիզում Տրատարակում է բոլշեւիկական Փարիսիայի Ախտնիկը — մի տօգայն և անհամ լրագիր, որ ունի սահմանափակ սպասում:

Կարելի է յիշել և Պրապայի Գիւղացիական Միութիւնը, որ նոյնպէս Հանրապետական պարաֆորմի վրա է կանգնած և հրատարակում է Կրեստեանկայա Ռոսիա արժեքաւոր պարբերականը:

Մենք կանգ առինք զիտաւորապէս Եւրոպայի ուստարագրութեան քաղաքական կազմակերպութիւնների վրա, բայց նրանց թիւը շատ է և Հեւտախառն և Հարաւային Ամերիկայում, և՛ Հեւտար Արեւելքում, և Արիայի ու Աֆրիկէի այլ և այլ երկրներում: Սակայն նրանք, մեծ մասամբ, կարւած են երկրից և ապրում են գլխաւորապէս գաղութային կենտրոնով:

Այս բոլոր կուսակցութիւններն ու խմբերը կարւած են միմեանցից, գործում են առանձին-առանձին, իրար հետ անվերջ վիճում են ու կոււում և ահագին ոյժ ու եռանդ են սպասում ի իրար տեղը: Միենչեւ այժմ չկարողացան և, Հակամարտ, շփոթի էլ կարողանան տեղեղն ընդհանուր մի ոյժ, որ ժամանակաւոր կերպով, զգալաբար ընթացում, Համախմբէր Հանրապետական բոլոր հոսանքները Ռուսաստանի ապագրութեան հիմնական գաղափարի շուրջը, որպէսզի ընդհանուր ուժերով յաղթանակ ապահովուց յետոյ իւրաքանչիւրը Հարուսակէ իր ճամբան համաձայն սեփական գաւանդին:

Լաւ գրքի մասին առում են՝ «Կարգացում է վէպի պէս», Պ. Մանդէլշտամի գրքը կարգացում է յափշտակութեամբ և հաւանակ ծայրից ծայր փակեղագրերով յագեցած լինելուն՝ Թողնում է վէպի, աւելի ճիշտ ասած, որբերգութեան տպագրութիւն — մի որբերգութիւն, որ լինէ մարդկային տառապանքով, արիւնով ու զիպանքով և՛ միջազգային զիւանագիտութեան պօգալի գործերի նկարագրութիւնով: Պ. Մանդէլշտամ միայն իրեն յատուկ ջանասիրութեամբ և եպակի ձեռնհասութեամբ ներկայացնում է մեզ Հայկական Հարցի բոլոր մանրամասնութիւնները՝ ծագման առաջին վայրկեանից մինչեւ մեր օրերը: մի կէտ իսկ չէ վրիպած նրա սուր սենտղութիւնից, մի փաստաթուղթ չէ ձեռացել անտեսում և մէկիւր-մէկիւր ձեր առջեւից անցնում են պատկերներ Հայ ժողովրդի նահատակութեան, Թիւրքիայի Հայազինը քաղաքականութեան և պետութիւնների գործած զպարիկ ոճիրների ու խորագիտութիւնների Հայիկի ու Հայաստանի Հանդէպ: Եւ որովհետեւ Հեղինակը ո՛չ միայն առաքիլաօրէն պատմող ու վերլուծող է, այլև շուրջ ու Տագի է գրել մշակած նիւթի մէջ, և գիրքը զուրս է եկել մարդկային մի անհաւոր սկսեղաքի, որ յախտի Հարւածով խիւում է զիւանագիտութեան աւագանացումը Հայաստանում ամէն մի ընթացիկ խոչին:

Պ. Մանդէլշտամը միջազգային իրաւունքի լուսաբոյն մասնագէտները մէկն է, անշուք՝ Միջազգային Իրաւունքի կաճառի, ուսուցչապետ Լահէյի Միջազգային Իրաւունքի ճեմարանի, Ա տարի վարել է Պոլսի ուսական գիւսարանտան առաջին թարգմանի պաշտօնը, վերջին տարիները եղել է Հ. Հ. Պատերազմութեան իրաւագէտ-խորհրդակց և Թիւրքիայի ու Հայկական գործերին իրազէլ է հէկը աւազինը արիւնից: Այդ է պատճառը, որ նրա՝ Թիւրքիայի մասին գրած աշխատութիւնները — «Le Sort de l'Empire Ottoman», «Հայկական Տարագր», «La Puissance Jeune-turque», (ուստեղէն)՝ «La Justice Ottomane dans ses relations avec les Puissances étrangères», յօդւածաշարքը «Revue générale de droit international», ի 1920-ի համարներում — քացառիկ արժեք են ներկայացնում: Ծանօթ թիւքիկներն լեզուի ու թիւրքական բաղբերին, ինչպէս նաեւ թիւրք պետական շրջանների իսկական մտայնութեանց ու քաղաքական սկզբունքներին՝ նա իր գաղաղութիւնների մէջ մեկնում է միջավայրի և հոգեբանութեան աւանձնա, յատուկ պայմաններով, որոնք, առհասարակ, անմատչելի են ձեռնում եւրոպական ուսումնասիրողների Համար: Եւրոպայի Թիւրքիայի վրա նայում է եւրոպացու աչքով: Մանդէլշտամը չի տարւում թիւքի եւրոպականացած արտաքինով և թարկանցում է նրա հոգու խորքը: Այս պատճառով նրա եղանակացութիւնները աւելի են համապատասխան իրականութեան:

Դառնալով ներկայ գրքին՝ պէտք է ասենք, որ զուր ճիգ կը լինի ըստ էութեան չենելու փորձը: Նայն իսկ հակիրճ բովանդակութիւնը առաջ բերելու համար անհրժեշտ կը լինէր լեցնել «Դրօշակ»-ի ամբողջ մի համար: Թւենք միայն բովանդակութեան գլուխները: Առաջին գլխում նկարագրւած է Թիւրքիայի ջրիտանկան ազգայնականութեան վիճակը և պետութիւնների միջամտութիւնները Պարսիկի գաղափարից մինչեւ:

\* Քաղաքական է եւ հայերէն Չ. Նաւասարդեանի կողմից եւ սպաւած է կոմիսսիան, 1916-ին, « Երեսասարդ» իրենի պետութիւնը անուճով:

